



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օսար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中华思想文化术语

第6辑，亚美尼亚语版

**Key Concepts in Chinese
Thoughts and Culture**

(Volume 6, Armenian Version)

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2018

ԶԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒՅԹՈՒՆԵՐ

հատոր 6

Ձարգմանիչ՝
Աստղիկ Առաքելյան

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2018

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Չ 590

Չ 590 Չինական մտքի և մշակույթի հիմնական

հասկացություններ:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աբաբեկյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նախի» հր., 2018, 124 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հասկանազող հիմնական հասկացությունների հանրագիտարանային մատենաշարի վեցերորդ գիրքը:
Հատորաշարն աննախադեպ ու բազմածավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլև կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.

All rights reserved.

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

ISBN 978-9939-1-0851-3

© «Ոգի-Նախի»/թարգմանության համար, 2018/

Չինական ճոքի և ճշակույթի
հիմնական հասկացություններ.
թարգմանական և հաղորդակցական նախագիծ

Խորհրդատուներ

Լի Սյուեցին Լին Ուսուն
Ֆլորընս Չյա-ին Յե Զան Ցիջի

Փորձագետների խորհուրդ

Դեկապար

Հան Զեն

Անդամներ

Չառ Ֆուլին, Չեն Ղեջան, Չեն Մինմին, Ֆեն Չիվեյ, Հան
Չինթայ, Հուան Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի
Չաոզո, Լոռու Յուլի, Մա Ցյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ,
Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Սինփեյ, Զան
Լիվեն, Զան Սիփին, Չեն Շուկու

Չինագետներ

Ալիթո Գայ Սալվատորե, Ուոչեր Թ.Էյմս, Մարթին
Ջ.Փաուլըն, Բ.Ռ.Դիփիակ, Վոլֆգանգ Քուբին, Հարի Անդերս
Շենսոն, Փոլ Քրուք, Մայքլ Քրուք, Ռոն Սթար, Զան և Այվըն
Ուոլգ, Զարլ Ուիլմեն

Գիտական խորհուրդ

Բայ Ձենքույ, Ցայ Լիցզյան, Չեն Շայյան, Չեն Շաոմին, Ֆու
Չիրին, Գուռ Սիառդոն, Մայքլ Յոար, Յե Շիձյան, Յու Շայ, Յու
Չժիֆեն, Յուան Չունյան, Չյա Ղեջուն, Չյան Շայլոնգ, Չյան
Շաոշու, Լի Ցունշան, Լի Չինլին, Լի Սյուեթառ, Լին Ման-Չիու,
Լյու Ցին, Լյու Չեն, Լյու Յուհուա, Մեն Սինյուան, Մեյ

Յուանյուե, Մեն Յիմնան, Թորսթըն Փերբերդ, Զոշուա Մեյսոն,
Ցյան Յուն, Ոեն Դայուան, Շեն Վեյսին, Լիներ Շի, Սուն Յիֆեն,
Թառ Լիցին, Թուն Սյաոհուա, Վան Գանի, Վան Շուեյմին, Վան
Քեփին, Վան Լիլի, Ուան Մինձիե, Վանգ Վեյդոն, Վեյ Յուշան,
Վեն Շայմին, Վու Գենյու, Վու Ջիձյե, Սիա Զիսյուան, Սյու
Մինցյան, Սյու Յանան, Սյու Ին, Յան Վենքին, Յան Սյուեձյուն,
Յան Սյուեդոն, Յան Իրուեյ, Յու Վենքառ, Յու Լայմին, Զան
Ցզյանմին, Զան Չին, Զան Սիյին, Զառ Թուն, Զեն Քայ, Զոու
Յումֆան, Զու Լյանջի, Զու Յուան, Յու Լի:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

այ մին ջե ցիան 爱民者强

Իշխանությունը բխում է մարդկանց մասին հոգ տանելուց

Պետությունը, որ հոգ է տանում իր ժողովրդի մասին, ունի խսկական իշխանություն: Կառավարիչը կարժանանա ժողովրդի վստահությանը ու աջակցությանը, և այդպիսի կառավարչի օրոք պետությունը ամուր հենարան կլինի միայն այն դեպքում, եթե որդեգրված և իրականացված քաղաքականությունն ու միջոցները բավարարեն ժողովրդի պահանջները և ներկայացնեն մարդկանց հիմնարար շահերը: Սա նոր թեմա է, առաջացել է «մարդկանց մասին հոգ տանելու» գաղափարից, որը պետության ամրապնդման և բարգավաճման հիմնական խթանիչ ուժն է: Սա նաև «մարդիկ են պետության հիմքը» և «քարեզործ / բարյացակամ մարդը հոգ է տանում այլոց մասին» հասկացությունների շարունակությունն ու զարգացումն է:

Մեջքերում.

Պետությունը, որ լավ է հոգում իր ժողովրդի մասին, ուժեղ է ու բարգավաճ. պետությունը, որ բացարձակ չի հոգում ժողովրդի մասին, աղքատիկ է ու բույլ: (*Unlāgh*)

բայ մա ֆեյ մա 白马非马

Սպիտակ ձին ձի չէ

Սա կարևոր պնդում է, սկիզբ է առել «Անունների դպրոցից»: Գունսունլունցին (մթա. 320-250թթ.) ամենայն մանրամասնությամբ քննարկել է այս թեզը: Նրա կարծիքով՝ «ձի» բառը ձիու ֆիզիկական մարմնի անվանումն է, իսկ «սպիտակ» բառը բնորոշում է գույնը: «Սպիտակ ձի» արտահայտությունը վերաբերում է թե՛ «ձիուն», թե՛ «սպիտակին», հետևաբար նույնը չէ, ինչ նկատի կունենայիք միայն «ձի» ասելով: Այս պնդումն ընդգծում է, որ «ձի» բառը չի հստա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կեցնում՝ առարկան սպիտակ է, դարչնագույն, թե սև: Շշզրիտ բնորոշ զիծն արտահայտելու համար անհրաժեշտ է ավելի մանրակրկիտ տարբերակում:

Մեջբերումներ.

Հայտնի եմ, և պատճառն այն է, որ ես եմ «սպիտակ ձին ձի չե» պնդման հեղինակը: (*«Գունսունլունցի»*)

Գունսունլունցին ասում էր. «Զիերը տարբեր գույների են լինում: Օրինակ, կան սպիտակ ձիեր: Եթե ձիերն անգույն լինեին, ինչպես պիտի նրանցից ընտրեինք սպիտակը: Սպիտակությունը ձիուն բնորոշ զիծն չէ: Սպիտակ ձին ձի է, որին հատուկ է սպիտակ գույնը: Արդյո՞ք ձին, որին հատուկ է սպիտակ գույնը, սովորական ձի է: Սպիտակ ձին ձի չէ: (*«Գունսունլունցի»*)

բառմին 保民

Պաշտպանիր մարդկանց

Եզրույթը վերաբերում է մարդկանց կյանքի անվտանգությունն ապահովելուն: Գաղափարն առաջին անգամ ներկայացվել է «Պատմության գրքում»: Հին չինացիների կարծիքով՝ Երկնքի իշխանությունը (մանդատը) որոշում էր, թե ում պիտի պատկանի գերագույն իշխանությունը մարդկանց աշխարհում: Մանդատը շնորհվում և չեղարկվում էր՝ ըստ նախասահմանված սկզբունքների: Առաքինի ու ողջախոն կառավարիչները ստանում էին մանդատը, իսկ առաքինություն չունեցողները՝ զրկվում դրանից: Երկնքի մանդատը պահպանելու համար կարևորագույն առաքինությունը մարդկանց պաշտպանելն է, այն է՝ ապահովել ժողովրդի անվտանգ և խաղաղ կյանքը, և սա իր ժողովրդի հանդեպ կառավարչի սիրո ու հոգածության դրսևորումն էր: «Ժողովրդին պաշտպանելը» կառավարման գլխավոր նպատակն էր Հինաստանում:

Մեջբերումներ.

Ի լրումն դրա՝ անհրաժեշտ է սովորել հին իմաստուն թագավորներից և նրանց միջոցները կիրառել՝ մարդկանց պաշտպանությունն ու բարեկեցությունն ապահովելու համար: («Պատմության զիրքը»)

Ցիի Սյուան թագավորն ասաց. «Ի՞նչ առաքինություն է պետք խկական թագավոր լինելու համար»: Մենցիուար պատասխանեց. «Պաշտպանիր մարդկանց և ապահովիր նրանց բարօրությունը. այդ դեպքում կիշխես երկրում՝ որպես թագավոր: Եվ ոչ չի համարձակվի ձեռնոց նետել քեզ»: («Մենցիուար»)

բառմին էր ուան 保民而王

Պաշտպանիր մարդկանց, ապա կառավարիր՝ որպես թագավոր

Եթե կարող ես մարդկանց տալ խաղաղությամբ ու երշանկությամբ լի կյանք, ուրեմն կարող ես միավորել ողջ երկիրը: Հին Չինաստանում «թագավորը» (*ուան Ֆ*) ոչ միայն նա էր, ով ուներ բարձրագույն իշխանություն, այլ մեկը, ով հստակ գիտակցում էր երկնքի ու երկրի, ինչպես նաև այլ մարդկանց միջև ներդաշնակություն պահպանելու հիմնարար սկզբունքը և արժանանում համընդիանուր աջակցության: «Մարդկանց պաշտպանել» նշանակում է սիրել ու հոգ տանել մարդկանց մասին՝ երաշխավորելով, որ նրանք կունենան գոյատևման միջոցներ, կստանան կրթություն և կապրեն ու կաշխատեն խաղաղ պայմաններում: «Ժողովրդին պաշտպանելը» պետության կամ կառավարության հիմնական գործառույթն է, մարդկանց սրտերն ու մտքերը նվաճելու նախապայման. սա նաև լեզվիմ իշխանության աղբյուր է: Այն ճշգրիտ արտահայտում է «նախևառաջ՝ մարդիկ» և «բարեգործ / բարեգործ կառավարում» գաղափարները:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում.

Ցիի Սյուան թագավորն ասաց. «Ի՞նչ առաքինություն պիտի ունենա մարդը, որպեսզի կարողանա կառավարել՝ որպես իսկական թագավոր»: Սենցիուսը պատասխանեց. «Պաշտպանիր մարդկանց և ապահովիր նրանց բարօրությունը, և կկարողանա իշխել երկրում՝ որպես թագավոր: Ու ոչ մարտահրավեր չի նետի քեզ»: (*«Սենցիուս»*)

բիեմին 別名

Հատուկ անուն

Հատուկ անունն օգտագործվում է որոշակի կարգի կամ առարկայի համար: Եզրույթից օգտվել է Սունցին (մթա. 313-238)՝ այն հակադրելով «ընդհանուր անվանը»: Անոնք պետք է արտահայտի առարկայի/երևույթի բնույթը: Նույն կարգում ներառված առարկաները, որոնք օժնված են յուրօրինակ հատկույթուններով, կոչվում են «հատուկ անուններ»: Կարգի ենթակարգերը՝ իրենց այլ առանձնահատկություններով, կարող են իրենց հերթին ունենալ ավելի բարձր «հատուկ անուն»: Լայն առնչություններ ունեցող հատուկ անունը կոչվում է «լայն հատուկ անուն»:

Մեջբերում.

Երբեմն ցանկանում ենք խոսել որևէ կոնկրետ խմբի մասին, ուստի այն կոչում ենք «քոչուններ» ու զազաններ»: Այս դեպքում «քոչուններ» և զազանները» լայն հատուկ անուն է: Կարող ենք բաժանել այն ավելի շատ ենթախմբերի՝ տարրերակումներ մտցնելով այնքան ժամանակ, մինչ առարկաների միջև այլևս տարրերություններ չմնան: (*«Սունցի»*)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

բին ցիան էր ու յի ջե ցան 兵强而无义者残

Ուժեղ բանակն ավերիչ է, եթե չի առաջնորդվում արդարությամբ

Պետությունը, որն ունի ուժեղ բանակ, բայց գործում է առանց արդարության, դատապարտված է ավերիչ լինել: Հին ժամանակներից ի վեր բարձր իդեալներով օժտած բոլոր կառավարիչները ձգտել են ունենալ հարուստ պետություն և ուժեղ բանակ: Սակայն գոյություն ունի մի ավելի կարևոր սկզբունք, այն է՝ արդարության սկզբունքը՝ չինացիների գերազույն երիկական սկզբունքը, որը բարձր է բոլոր նյութական շահերից: Ուժեղ բանակը, որ չի առաջնորդվում արդարության սկզբունքով, կործանարար է լինելու:

Մեջքերում.

Վտանգավոր է, եթե հաջողության ձգտելով՝ դառնում ես անվստահելի: Ուժեղ բանակն առանց արդարության ավերիչ է: (*Գուանցի*)

բու ուան բայսին ջի բին 不忘百姓之病

Երբեք մի՛ մոռացիր մարդկանց տառապանքները

Կոնֆուցիականները հավատացած են, որ բարձրաստիճան պաշտոնյայի նպատակն է՝ ամեն ինչ անել, որ մարդիկ ապրեն խաղաղության ու զոհունակության մեջ: Պաշտոնյաները երբեք չպիտի մոռանան ժողովրդի բարօրության մասին, մտահոգվեն նրանց տառապանքներով և ջանք ու եռանդ չխնայեն՝ նրանց քշվառությունից հեռու պահելու համար: Սա մարմնավորում է «բարեգործ կառավարման» կոնֆուցիական գաղափարը՝ հրաշալի չինական երիկական ավանդույթ և պարտավորություն բարձր իդեալներով առաջնորդվող մարդկանց համար, որոնք աշխատում են հանուն

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հասարակական բարգավաճման և ժողովրդի բարեկեցության: Գաղափարը հրաշալի արտահայտված է Սուն դինաստիայի նշանավոր նախարար Ֆան Չունյանի (989-1052թթ.) հեղինակած «Հուշարձան Յուեյան աշտարակին» ստեղծագործության հետևյալ տողերում: «Անհանգստացիր, քանի դեռ մյուսները չեն սկսել անհանգստանալ, և ուրախացիր, միայն երբ բոլորն արդեն երջանիկ կլինեն»:

Մեջքերում.

Մարդ կարող է ֆիզիկապես վնասվել, բայց երբեք չափահատի հրաժարվի ձգտումից: Նույնիսկ վտանգավոր իրավիճակում պետք է շարունակել մտահոգվել այն մասին, թե ինչպես քերևացնել հասարակ մարդկանց տառապանքները: («Ծեռակի զիրքը»)

ցայ Շ

Տաղանդ /Ընդունակություն/ Հատկանիշ

Խոսքը վերաբերում է մարդու ունակություններին և հատկանիշներին: Մասնավորապես, եզրույթն ունի երկու իմաստ: Առաջին, այն վերաբերում է երևույթներին արձագանքելու և դրանք կարգավորելու մարդու ունակությանը: Այս իմաստով այդ ունակությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր է: Հնարավոր է, որ մարդն օժտված լինի տաղանդով: Կան մարդիկ, որոնք ունեն բազմաթիվ տաղանդներ, ու կան նաև մարդիկ, որոնք ունեն մեկ հատուկ տաղանդ: Երկրորդ, խոսքը վերաբերում է այն հատկանիշներին, որոնցով մարդը ծնվում է: Հղկված մարդու հատկանիշները մոտ են կամ գրեթե համընկնում են կատարյալ մարդու էության հետ: Մարդիկ տարբեր կարծիք ունեն այն մասին, թե արդյոք տաղանդը բարիք է թե չարիք. տարբեր են նաև նրանց տեսակետները մարդու էության հարցի շուրջ:

Մեջբերումներ.

Չունգունը՝ Զի ընտանիքի դեկավարը, Կոնֆուցիոսին հարցրեց կառավարման մասին։ Կոնֆուցիոսն ասաց. «Նախ, վարչական աշխատանքը հանձնարարի ենթականերին, ներիր նրանց, ովքեր սխալներ են բույլ տալիս, ու քաղաքների նրանց, ովքեր առարինի են ու ընդունակ» («Անալեկուներ»)։

Մենցիուսն ասաց. «Առատ քերքի տարիներին երիտասարդները հակված են լավ արարքներ գործել. քնական աղետի տարիներին երիտասարդները հակված են բռնությունների դիմել։ Բանն այն չէ, որ նրանք տարբերվում են էությամբ, պարզապես դաժան հանգամանքների պատճառվ հրաժարվում են պարկեշտ մտադրություններից»: («Մենցիուս»)

Չանջոու ցիփայ 常州词派

Ցի պոեզիայի մասին մեկնաբանությունների Չանջոու դպրոցը

Եզրույթը վերաբերում է Ցին դինաստիայի կեսերի բանաստեղծական քննադատության ամենաազդեցիկ դպրոցին, որը կրում է առաջնորդի՝ Չան Հույյանի (1761-1802թ.) անունը. նա գիտնական է Չանջոուից: Հույյանը կազմել է «Ցի անթոլոգիան», որը բաղկացած է մտան, Հինգ դինաստիաների և Սուն ժամանակաշրջանների 44 բանաստեղծների հեղինակած 116 ցի բանաստեղծություններից: Ցի պոեզիայի նրա գեղագիտական չափանիշները ներառում են հարուստ զգացմունքային բովանդակության պատկերում հակիրճ լեզվով և տրամադրության ու զգացմունքի պատկերում բառերից զատ՝ նուրք զուգորդումների միջոցով: Նրա մեկնաբանությունների շնորհիվ ցի ոճի գրական կարգավիճակը զգալիորեն բարձրացավ: Չորս Չին (1781-1839թ.), որը հաջորդեց Չանին, ոչ միայն շարունակեց նոյն պրակտիկան ու տեսությունը, այլև ընդլայնեց գաղափարները և կազմեց

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

«Սուն դինաստիայի չորս պոետների բանաստեղծությունների ընտրանին»: Չոռուն առաջարկում էր *ցի* պոեզիա գրելու մի քանի տեսություն. սկսնակների համար՝ *ցի* պոեզիայի տեխնիկան յուրացնելու համար կարևոր է սովորել արտահայտել զգացմունքները նյութական առնչությունների միջոցով. բայց ձևի ճշմարիտ խորքերը հասնելու համար պետք չէ հորինել նյութական առնչություններ, իսկ դրանց արտահայտած զգացմունքները պիտի միաժամանակ թե՛ ներառեն, թե՛ անցնեն դրանց սահմանները: Մեկ այլ տեսություն առաջարկում էր «միաձուել» դրանք: Թան Սիանը (1832-1901թթ.), Չեն Թինջունը (1853-1892թթ.), Քուան Չոռոյին (1859-1926թթ.) այս գրական դպրոցի երրորդ սերունդն էր: Նրանց ստեղծագործությունները՝ «Աշխատություններ Ցիի վերաբերյալ՝ Ֆութանի կողմից», «Դիտարկումներ լիրիկայի մասին Սպիտակ անձրև ստուփիայից», «Նորեր և մեկնարանություններ Ցիի վերաբերյալ՝ Հույֆենի հեղինակմամբ», էլ ավելի հարստացրին ու բարեփոխեցին *ցի* պոեզիայի քննադատության արվեստը: Չանջոռ դպրոցի կարևորագույն ներդրումն էր՝ տեսականորեն ցույց տալ *ցի* ոճի դերը փիփուփայական մտքերի, ինչպես նաև նկրտումների ու ձգումների արտահայտման մեջ: Այսպես այն նույն հարթության վրա դրվեց դասական բանաստեղծական ձևերի հետ:

Մեջբերումներ.

Ցի ինքնին խիստ կարևոր բանաստեղծական տեխնիկա չէ, մինչդեռ պատմական տեսանկյունից դրա առաջին վկայությունները նկատելի են թե՛ Հույփիսային, թե՛ Հարավային Սուն դինաստիաներում, ուստի տրամաբանական է, որ այսօր կա երկու խոշոր դպրոց՝ Չանջոռ դպրոցը (Չիանսուում) և Չեճիան դպրոցը: Այն ժամանակից ի վեր, երբ Չան Հույյանը և Յուն Զինը, որոնք նույն ալբեֆեկտուրայից էին, ինչ ես, նոր ուղիներ բացեցին *ցի* ոճի համար՝ առաջարկելով «Երգերի գիրքը» և «Լի Սառն»՝ որպես *ցիի* գրական վկայակոչումներ, *ցի* գրելառող վերագտավ Ուեն Թինյունի, Ուեյ Չուանի,

Չոր Բանյանի և Սին Զիջիի պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները: Ի հայտ եկան բազմաթիվ այլ ցի բանաստեղծներ: Դուն Շիսին հավաքեց զանազան ոճերի լավագույն նմուշները: (Չոր Չի. «Յի պոեզիայի ժողովածովի այսարան՝ Ցունչեն սրուդիայից»)

Չոր Չիի «Յիի քննադատությունը» հրաշալի ուղեցույց է: Այս աշխատության մեջ նա պարզաբանում է բազմաթիվ շփոթեցնող հասկացություններ, և խորանուիս է լինում ցիի ծագման և զարգացման հարցերում: «Սուն դինաստիայի շրու պոետների բանաստեղծական ժողովածովի» մեկնաբանություններով նա լույս է սփռել ցիի ստեղծագործական աշխարհի վրա: (Չոր Ցունոու. «Ուսան Չիանանին համահունչ»)

Հուանցի 传奇

Լեգենդար պատմություն

Եզրույթը գրական ոճի անվանում է: Վերաբերում է ստեղծագործությունների երեք տեսակի. 1) Կարճ պատմվածքի տեսակ Թան և Սուն դինաստիաներում, որոնք հավանաբար ձևավորվել են Վեց դինաստիաների վաղ շրջանում, գերբնական ուժերի մասին հերիալիստից: Ավելի ուշ թեմաներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով հասարակական կյանքը պատկերող, մարդկանց և իրադարձությունների մասին պատմություններ: Չուան(传) նշանակում է «լեգենդար», իսկ ցի(奇)՝ «տարօրինակ ու արտասովոր», ուստի եզրույթն ի սկզբանե նշանակում է վերաշարադրել տարօրինակ և արտասովոր իրադարձությունների մասին պատմություններ, որոնք սերնդներունդ փոխանցվել են բանավոր խոսքի միջոցով: Թան դինաստիայում Փեյ Սինի հեղինակմամբ «Չուան Յի» աշխատությունը թերևս առաջին ստեղծագործությունն է, որտեղ եզրույթն օգտագործվել է: Սուն դինաստիայում Թան դինաստիայի մասին «Յինյինի պատմությունը» վեպը համարվում է չուանցի, իսկ Չուանի ժողովուրդը Թան դինաստիայի մասին բոլոր պատմությունները կոչում էր Թանի

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

չուանցի: Սուս դինաստիայի *չուանցին* տեղական բարբառով էր ու ավելի ռեալիստական, քան Թան դինաստիայի պատմությունները:

2) Երաժշտական դրամա, հարավային օպերա և Յուան ցաջուն Սուն և Յուան դինաստիաներում, որոնց մեծ մասը հիմնված է Թան շրջանի պատմությունների վրա:

3) Լայնամետրաժ օպերաներ Մին և Ցին դինաստիաներում, որոնք հիմնված էին Հարավային օպերայի (*Նանսի*) վրա, ինչպես նաև ներառում էին Յուանի ցաջուի որոշ առանձնահատկություններ: Այս ոճի ստեղծագործություններից են Լիան Չենյոփ (1519-1591թթ.) «Մշուշաքողը լվանալու պատմությունը», Կուն Շանրենի (1648-1718թթ.) «Դեղձի ծաղիկներով հովհարը», Հուն Շենի (1645-1704թթ.) «Հավերժական կյանքի պայատը»: *Չուանցի* հնագույն ոճը զարգացել ու նորացվել է դարերի ընթացքում՝ թե՛ պատմության բրվանդակության, թե՛ կատարողական տեխնիկայի տեսանկյունից: Սակայն հիմնական նպատակը մնում է նոյնը՝ «պատմություններ պատմել տարօրինակ դեպքերի ու արտաստվոր մարդկանց մասին»:

Մեջքերումներ.

Չին և Յուան դինաստիաներում հայտնի ցաջու եզրույթը Մին դինաստիայի վաղ շրջանում դարձավ *չուանցի*: Յաջուն հյուսային երաժշտություն է, իսկ *չուանցին* հարավից է: Յաջուն կազմված է չորս գործողությունից, յուրաքանչյուրում՝ մեկ հիմնական կատարող, իսկ չուանցիում՝ մի քանի գործողություն է՝ հավասարապես կարևոր մի քանի կերպարներով: Յաջուում այումեն միայն մեկ իրադարձության մասին է, ինչը նեղացնում է պատմության սահմանները, իսկ *չուանցիում* հիմնական կերպարների տարբեր մեկնաբանություններն արվում են ամենայն մանրամասնությամբ, ինչը, բնականաբար, պատմությունն ավելի հետաքրքիր է դարձնում: (Լյու Թիանչեն. «Մեկնաբանություններ Յու դրամայի մասին. հեղինակներն ու նրանց սրբեղագործությունները»)

Հին ժամանակներում դրամայի տեքստերը կոչում էին *շուանցի*. գրական այս ժանրի միջոցով արտասովոր պատմական իրադարձությունները դարերի ընթացքում սերնդեսերունդ փոխանցվում էին: Այլ կերպ ասած՝ եթե արտասովոր շլինեին, ոչ դրանց մասին չեր խոսի: «Վեպը» կամ «սինը» «տարօրինակ և արտասովոր» եզրույթի մեկ այլ տարբերակ է: Եթե այս սյուժեին անդրադարձ է արվել նախկինում, և այն ծանոր է հազարավոր մարդկանց, ապա դրանում ոչ մի նորություն չկա. այդ դեպքում ի՞նչ կարիք կա սերնդեսերունդ փոխանցել: Ուրեմն այն կարևոր է նրանց համար, ովքեր տեքստեր են գրում՝ *շուանցի* իմաստը հասկանալու նպատակով: (Լի Յու. «Պատրահական գրառումներ՝ համարի ժամերին»)

դաշին 大节

Հիմնական սկզբունքներ

Խոսքը վերաբերում է հիմնարար սկզբունքներին և վարքագծի կանոններին: Ի տարբերություն երկրորդական սկզբունքների՝ զիշավոր սկզբունքները վերաբերում են տարբեր հասարակական կարգավիճակ ունեցող մարդկանց հասուլ հիմնարար պարտականություններին, և թե դրանք ինչպես պետք է կատարվեն. սրանք վարքագծի ընդունված կանոններ են, որ մարդիկ պարտավոր են պահպանել: Մարդկային հարաբերություններում գուցե բույլ տան սխալներ, բայց ընդհանուր առնամք ենթարկվում են հիմնական սկզբունքներին: Գուցե կորցնեն ինքնավերահսկողությունը, բայց դա կլինի լուրջ ճնշմանը կամ մեծ զայրակղությանը չդիմակայելու հետևանք: Հետևարար, հիմնական սկզբունքներին հավատարիմ մնալը դառնում է զիշավոր մարտահրավեր:

Մեջբերումներ.

Պետությունն ունի հինգ հիմնական սկզբունք, և դուք չեք հնազանդվել դրանցից և ոչ մեկին. ակնածանքով վերաբերվել միապետին, հնազանդվել նրա քաղաքականությանը, հարգել ավելի բարձր կարգավիճակ ունեցողներին, ծառայել ավագներին և աջակցել հարազատներին: Մրանք են կառավարման հինգ հիմնական սկզբունքները: («Յուոյի մեկնարանությունները Գարնան և աշնան լրարեկորդի վերաբերյալ»)

Ցենցին ասաց. «Պատկերացրեք՝ կար մի անհատ, որին կարելի է վստահել որբուկի խնամքը, որին կարելի է պետությունը կառավարելու լիազորություն տալ, և որին ոչինչ չի ստիպի դժվարությունների դեպքում հրաժարվել հիմնական սկզբունքներից. արդյո՞ք այսպիսի մարդն առաքինի մարդ է: Անշուշտ, նա առաքինի է»: («Անալիկրաներ»)

Պաաշոուշա 大收煞

Փայլուն ավարտ

Եզրույթը վերաբերում է դրամայի վերջին մասին: Այն պահանջ է, թե ինչպես պեսք է ավարտվի դրամատիկ կամ օպերային ստեղծագործությունը, այն է՝ լինի բնական ու ողջամիտ, և ոչ թե դառնա պիեսի կերպարների ու իրադարձությունների կարծրացած հանգուցալուծում հանդիսատեսին հնարավորություն տալով վայելել ամբողջական սյուժեն դիտելու հաճույքը. կոչեք ու արձագանքներ, զարգացում և դադար, սկիզբ և վերջ, պատճառ և հետևանք, անցում լարվածությունից թերևության, ակնկալիքից՝ գոհունակության: Մի խոսքով՝ լավ ավարտը պետք է «երջանիկ հանգուցալուծում լինի բոլորի համար», ինչպես ասում էր Լի Յուն (1611-1680թթ.): Սա եմքաղում է ոչ միայն բաժանումից որոշ ժամանակ անց ընտանիքի վերամիավորում կամ սիրող զույգի

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հարսանիք, այլև պիեսի շրջանաձև կառուցվածքի հանգուցալուծությունը: Պիեսի վերջին մասը վերջին քայլն է, որը փակում է շրջանն ու հասցնում գագաթնակետին:

Մեջբերում.

Վերջին տեսարանն ամբողջ դրամայի փայլուն ավարտն է: Այստեղ գլխավոր խնդիրն առանձին բանադիմերը մեկտեղելն ու երջանիկ, բնական հանգուցալուծման հաճույքը վայելելն է: (Լի Յու. «Պարահական գրառումներ՝ հանգույի ժամերին»)

դա սին բու յուե 大信不約

Մեծագույն վստահությունը երդումների մեջ չէ

Մեծագույն վստահությունը ենթադրում է նաև երդումներ, քայլ չի սահմանափակվում դրանցով: Հին չինացիները հավատացած էին, որ վստահելին իր խոսքը չդրժող մարդն է: Բարեխղճորեն և հավատարմաքար գործելը հիմնական պահանջ է մարդասեր լինելու համար: Վստահությունն էական նշանակություն ունի պայմանագրի կամ երդման համար: Պայմանագիրը միայն վստահության վավերացումն է: Առանց վստահության պայմանագիրն ընդամենը թղթի կտոր է: Այն ինաստ ունի միայն, երբ կողմերը վստահում են միմյանց: Գաղափարը շեշտում է բարեխղճ և հավատարիմ լինելու կարևորությունը:

Մեջբերում

Մարդու մեծ մեծ առաքինությունը չի ծնվում միայն պաշտոնական կարգավիճակից: Համընդիանուր սկզբունքի կիրառումը չի սահմանափակվում եզակի հանգամանքով: Մեծագույն վստահությունը երդումների կարիք չունի: Եղանակային փոփոխությունները միշտ չեն, որ ենթարկվում են մեկ ընդհանուր սկզբունքի: («Ծիսերի զիրքը»)

Պայիրում 大一统

Մեծ միասնություն

Այս հասկացությունը կարևորում է ազգային գաղափարախոսության և օրենքի միասնությունը: Առաջարկվել է Դուն Չունչուի (մքա. 179-104թթ.) կողմից՝ որպես «Գարնան և աշնան տարեգրերի» առանցքային թեմա: Նրա կարծիքով՝ պետությանը պետք է միասնական իրավական համակարգ, բայց այդպիսի միասնության հասնելու համար, նախ, պետք է միավորվեն մտքի տարրեր դպրոցները: Առանց միասնական գաղափարախոսության մարդիկ չեն իմանա՝ ինչին հետևել: Դունը հավատացած էր, որ կոնֆուցիականությունը պետք է լինի ազգի մեջ ու միակ իշխող գաղափարախոսությունը: Նրա կարծիքով՝ օրենքի ու գաղափարախոսության միասնությունը պետք է լինի երկարատև սկզբունք:

Մեջքերում.

«Մեծ միասնություն» գաղափարը, որն ընկած է «Գարնան և աշնան տարեգրերի» հիմքում, հաստատուն նորմ է, որը հավասարապես կիրառելի է թե՝ անցյալում, թե՝ ներկայում: Մեր օրերում ուսուցիչներն ունեն տարրեր դոկտրիններ, իսկ մարդիկ՝ տարրեր կարծիքներ: Գիտնականներն ունեն տարրեր տեսություններ և չունեն ընդհանուր փիլիսոփայություն: Դա է պատճառը, որ կառավարիչն անզոր է հարկադրել միասնական չափանիշներ: Երբ օրենքներն ու հրամանները հաճախակի փոփոխվում են, ենթականները չեն կողմնորոշվում ինչին հետևեն: Իմ համեստ կարծիքով՝ այն ամենը, ինչ չի պատկանում վեց արվեստներին ու կոնֆուցիականությանը, պիտի արգելվի, իսկ դրա զարգացումը՝ կանխվի: Ոչ ուղղափառ դոկտրինների արգելվքը միշտ է կառավարության օրենքները միավորելու, օրենքներն ու կանոնադրությունը հստակեցնելու և մարդկանց բացատրելու, թե ինչին պետք է հետևել: («Հան դինաստիայի պատմությունը»)

Պիլի 地理

Հողի ֆիզիկական առանձնահատկությունները որոշող օրենքներ / Աշխարհագրություն

Եզրույթը նշանակում է օրենքներ, որոնք վճռում են հարաբավայրերի, սարերի ու գետերի ֆիզիկական առանձնահատկությունները: Եզրույթը «Փոփոխությունների գրքից» է և նշանակում է, որ հողի անհարթ տեղագրությունը և գետերի ու սարերի ուղղությունը որոշվում են որոշ կայուն ու անփոփոխ օրենքներով: Հին չինացիները հավասում էին, որ թե՛ մարդկային հարաբերությունները, թե՛ ամենայն ինչ, որ գոյություն ունի տիեզերքում, կառավարվում է նույն օրենքներով, ուստի այս օրենքները պահպանելով և դրանց հետևելով՝ մարդկային կարող են հասարակական կարգուկանն հաստատել: Հետագա դարաշրջաններում եզրույթը ներառում էր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արտադրությունը, տրանսպորտը, մարդկանց բնակեցումը և տնտեսական զործունությունը, որն իր վրա կրում էր բնական միջավայրի ազդեցությունը:

Մեջքերումներ.

«Փոփոխությունների գիրքը» նկարագրում է երկնքի ու երկրի օրենքները: Նայելով վեր՝ աստղերին, և վար՝ երկրին, կարող ենք տեսնել, թե ինչն է ենթադրելի, ինչը՝ ակնհայտ: («Փոփոխությունների գիրքը»)

Արևի, լուսնի ու աստղերի շարժումը կոչվում է **թիւանուհն** կամ օրենքներ, որոնք կառավարում են համաստեղությունների շարժումը և եղանակի փոփոխությունը. սարերի ու գետերի տեղաբաշխումն ու դասավորությունը կոչվում է **դիլի** կամ օրենքներ, որոնք վճռում են դաշտերի, սարերի ու գետերի ֆիզիկական առանձնահատկությունները: («Հան դինասուրիայի պատմությունը»)

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ֆա զե սուոյի այմին յե 法者所以爱民也

Օրենքը ժողովրդին սիրելու միջոց է

«Օրենքը ժողովրդին սիրելու միջոց է» արտահայտությունը ենթադրում է, որ օրենքներն ու հաստատությունները ստեղծված են մարդկանց բարօրության համար: Սա Լեզալիստական դպրոցի կարևոր ուղենշային սկզբունք է: Իսկ խորքային նշանակությունը հետևյալն է. օրենքները և հաստատությունները փոխելու կամ նորերը հիմնելու հիմքը և գլխավոր նպատակը պետք է լինի «ժողովրդին սիրելը»: Լեզալիստները հայտնի են բիրտ օրենքների և դաժան պատիճների պաշտպանությամբ՝ ի տարբերություն կոնֆուցիական «առաքինությամբ կառավարելու» սկզբունքի, բայց ավելի խոր մակարդակում դրանք գրեթե չեն տարբերվում այնպիսի գաղափարներից, ինչպիսիք են «ժողովուրդը՝ որպես հիմք» և «բարեգործությունը»:

Մեջբերում.

Օրենքը ժողովրդի մասին հոգ տանելու միջոց է, իսկ ծեսերը հարմար պայմաններ են ստեղծում դրա համար: Հետևաբար, եթե իմաստունն ի զորու է կառավարել պետությունը, նա ստիպված չէ հետևել իին օրենքների ու համակարգի մողելին: Քանի դեռ հնարավոր է օգնութել մարդկանց, նա հարկադրված չի լինի առաջնորդվել ծեսերի հին համակարգով: («*Сանգ ասործոն զիրքը*»)

**ֆա զե թիանցի սուո յու թիանսիա
զունզուն յե** 法者天子所与天下公共也

**Օրենքը պետք է արժանանա հավասարապես թե՛ Երկնքի
որդու, թե՛ բոլոր մարդկանց հարգանքին**

Թե՛ ինքնիշխան կառավարիչը, թե՛ ժողովուրդը հավասարապես պիտի հարգեն օրենքները: Սա նշանակում է, որ

օրենքի հրապարակվելուն պես յուրաքանչյուր ոք, անկախ կարգավիճակից կամ հարստությունից, պետք է ենթարկվի դրան. նույնիսկ պետության գերազույն կառավարիչը չի կարող կամայական փոփոխություններ կատարել: Այս գաղափարը կարելի է դիտարկել՝ որպես հետևյալ հին լեզակիստական գաղափարի շարունակություն՝ «օրենքը նախապատվություն չի տալիս բարձր դասին»: Այն ընդգծում է ոչ միայն օրենքի անդրդեմությունն ու հավասարությունը. օրենքը չի ճանաչում իշխանություն կամ քաղաքականություն:

Մեջբերում.

Զան Շիջին ասում էր. «Օրենքը պետք է հարգանքի արժանանա հավասարապես թե՛ Երկնքի որդու, թե՛ բոլոր մարդկանց կողմից: Ու եթե ես ավելի ծանր պատիժ պարտադրեմ, մարդիկ չեն հավատա օրենքին... Արդարության պատասխանատուն անաշառ արդարություն է բաշխում ամբողջ Երկրում: Եթե նա թեկուզ աննշան կողմնակալություն դրսւորի, մյուս բոլոր օրենք պարտադրողները կամայականորեն կկրծատեն կամ կավելացնեն պատիժները. իսկ մարդիկ որտեղից յի՞ց իմանան ինչպես պահեն իրենց»: («Պալրմարտանի զրառումները»)

Ֆենիուա 風化

Բարոյական զարգացման ազդեցությունը

Խոսքը վերաբերում է այն ազդեցությանը, որ կառավարչի առաքինի վարքագիծը բողոքում է իր ենթակաների վրա, ճիշտ այնպես, ինչպես քամին է փշում անթիվ-անհամար մարդկանց ու առարկաների վրա: Բարոյական զարգացումը կրթության կարևոր բաղադրիչներից է: Ըստ կոնֆուցիականության կառավարիչը պետք է օրինակ ծառայի ժողովրդին՝ աննկատելիորեն ներգործելով մարդկանց վրա: Եթե նա բարոյական ու եթիկապես ճիշտ վարքագիծ ունի, մարդիկ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կիետևեն նրա օրինակին ու հոժարակամ կառաջնորդվեն ծեսերով ու բարոյական չափանիշներով՝ առանց հարկադրանքի: Եզրույթը վերաբերում է նաև գերիշխող հասարակական-բարոյական վարքագծին այն երկրում, որը ձևավորվում է կառավարչի ազդեցության ներքո:

Մեջբերումներ.

Չիքանցին հարցրեց Կոնֆուցիոսին կառավարելու ձևի մասին: Իսկ ի՞նչ կլինի, եթե սպանենք նրանց, որ չարիք են բերում, ու այդպես ամրապնդենք բարոյական չափանիշները», - ասաց նա: Կոնֆուցիոսը պատասխանեց. «Մի՞թե պարտադիր է սպանել մարդկանց: Եթե պատվով գործես, մարդիկ ինքնարերաբար կիետևեն ձեզ: Ազնվական մարդու առարինությունը նման է քանու, հասարակ մարդու առարինությունը՝ խոտի: Եթե քամին փշում է, խոտը կրանում է»: («Անալիկուներ»)

«Բարոյական կրթությունը» այն սկզբունքներն են, որոնք կառավարիչները խրախուսում են հասարակ ժողովրդի շրջանում, ինչպես նաև ազդեցությունը, որ նախորդ սերունդները բողնում են գալիք սերունդների վրա: (Յան Չիբույ. «Նախազգուշացումներ Յան բնականիքին»)

գայ յի բու գայ ձին 改邑不改井

Կարող ես փոխել քաղաքը, բայց ջրհորը չես փոխի

Կարող ես փոխել քաղաքը, բայց հորերը չես կարող տեղափոխել: Ջրհորները, որտեղից խմելու ջուր է ստացվում, նույնպես Հին Չինաստանի հասարակական միավորներից են. այն ժամանակ ութ տնային տնտեսություն օգտվում էր մեկ ջրհորից: Մարդիկ չեն կարող ապրել առանց ջրի, ուստի այն վայրերում, որտեղ մարդիկ են հավաքվում, ջրհորներ կան: Դրանց տեղադրությունը որոշվում է ստորգետնյա

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ջրերով, իսկ դա հեշտությամբ չի փոխվում: Անկախ նրանից՝ ինչպես էին տեղափոխվում և վերակառուցվում մարդկանց տները, ջրհորներն անշարժ ուղենիշեր էին: Այստեղ ինձասն այն է, որ շատ բան կարելի է ձևափոխել, բայց մարդկանց կենսապահովման հիմնական կարիքները մնում են նույնը:

Մեջբերում.

Քաղաքը կարելի է փոխել, բայց հորերը հնարավոր չեն տեղաշրջել: Դրանք ոչ չորանում են, ոչ ավելանում: Մարդիկ ամեն օր գալիս-զնում, զուր են վերցնում ջրհորներից: («*Փոփոխությունների գիրքը*»)

գանյի 刚毅

Ամուր և վճռական

Այս երկու չինական տառանշաններից առաջինը նշանակում է ամուր ու չճկվող, իսկ երկրորդը՝ վճռական ու որոշիչ: Քանի որ մարդիկ հաճախ ենթարկվում են անբարենպատ ազդեցության, որոնք ազդում են հատկապես բարոյական չափանիշների վրա, եզրույթն ընդգծում է դրանց դիմակայելու անհրաժեշտությունը՝ վարքագծում հավատարիմ մնալով երիկական կանոններին: Մարդիկ պետք է ոչ գայթակղվեն մասնավոր գործոններով, և ոչ էլ տեղի տան բռնությանն ու հարկադրանքին: Կոնֆուցիական գիտնականներն ամրությունն ու վճռականությունը համարում են կարևոր առարինություն, որը մոտ է բարեգործությանը:

Մեջբերումներ.

Կոնֆուցիոսն ասում էր. «Լինել ամուր, վճռական, պարզ և բառերի մեջ՝ չափավոր: Սա առաքինություն է, որ մոտ է բարեգործությանը»: («*Անալեկտուններ*»)

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Կոնֆուցիական գիտնականներին կարելի է վերաբերվել բարեկամաբար, բայց նրանց հնարավոր չէ ստիպել գործել հարկադրաբար. կարելի է սերտ հարաբերություններ ունենալ այլոց հետ, բայց չենթարկվել հարկադրանքի, և կարելի է սպանվել, բայց չանարգվել: Նրանք ապրում են պարզ կյանքով, ուսում պարզ սնունդ: Նրանց թերությունները պետք է մատնանշել նրբանկատորեն, բայց ոչ ուղիղ մեղադրանք ներկայացնելով: Այդպիսին է նրանց ամրությունն ու վճռականությունը: («Ծիսկի զիրքը»)

գեսինքի 歌行体

Բանաստեղծական երգ

Բանաստեղծական երգերը զարգացել են ժողովրդական բալլադներից և Հան, Ուեյ և Վեց դինաստիաների երգերից: Դրանց հատուկ է երկարությունը, զգացմունքների համարձակ արտահայտումը, նախադասությունների և տաղաչափական ձևերի զանազան տեսակները: Բանաստեղծական երգերը հետևում են դասական մոդելին՝ տողում հինգ տառանշան, տողում յոթ տառանշան և խառը մոդել: Ժանրը ստեղծվել է Հարավային դինաստիայի բանաստեղծ Բան Զաոյի (414?-466 թթ.) կողմից, որի համար ժողովրդական երգերը ներշնչամքի արյուր էին: Թան դինաստիայի բանաստեղծներ Լի Բայը (701-762թթ.) և Բայ Զույին (772-846թթ.) նույնական բանաստեղծություններ էին գրում այս ոճում:

Մեջբերումներ.

Գեն (歌 երգելը) երկար, երգեցիկ տեքստ է, ենթադրում է տարբեր երկարությամբ տողեր, որոնք սահմանափակված չեն տաղաչափական կանոններով. *սինը* (行 հանդարտ հնուող) երգեցիկ խոսք է, որն ազատ ու սահուն կերպով արագանում կամ դանդարձում է: Եթե օգտագործվում է թե՛ *գեն* (ge), թե՛ *սինը* (xing), եզրույթը կոչվում է գեսին (gexing)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

(*歌行* ազատ և հոսուն երգեցիկ խոսք կամ բանաստեղծական երգ): (Սու Շիցեն. «*Միկնարանիով պոեզիայի լուսաբառը*»)

Գեսին (*gexing*) եզրույթը վերաբերում է պոեզիա արտասանելու ազատ, սահուն ու անբռնազբու ձևին, երբ հեղինակն ամենայն մանրամասնությամբ չի հետևում դասական պոեզիայի ուղեցույցներին: Այսպիսով, պոեզիայի այս երկու ոճում նախադասության կաղապարները, դարձվածքների ընտրությունը, տաղաչափական սխեմաներն ու տոնայնության ազդեցույցներն ինչ-որ չափով տարբերվում են: (Ու Նե. «*Մուկեղծազործության լուսաբառը լուսակների նախարանների ժողովածու*»)

Գումանիայ 公安派

Գումանի գրական-ստեղծագործական դպրոցը

Այս գրական դպրոցը ներկայացնում են երեք եղբայրներ՝ Յուան Յունդառն (1560-1600թթ.), Յուան Հունդառն (1560-1600թթ.) և Յուան Չունդառն (1568-1610թթ.), որոնք ուշ Մին դինաստիայում ապրում էին Գումանում Հուրեյ նահանգում: Եռյակից Յուան Հունդառն ամենակայացածն ու նշանավորն էր: Հաջորդը Յուան Չունդառն էր, որը գերազանցեց եղբորը՝ Յուան Չունդառյին: Նրանք պաշտպանում էին սեփական անկեղծ զգացմունքները լիովին արտահայտելու քեզը՝ այդպիսով հակադրվելով ինը գրականության անհոգի ու անշունչ նմանակմանը, որին կողմ էին Մին դինաստիայի վաղ շրջանի գրական գործիչները: Բացի այդ, նրանք անկեղծ հետաքրքրությունը կամ մտահոգությունը համարում էին գրաքննադատության չափանիշ՝ պնդելով, որ ստեղծագործությունը պետք է բխի սրտից ու չահմանափակվի կանոններով ու ձևակերպումներով: Զանքերը կենտրոնացնելով գերազանցապես արձակում և պոեզիայում՝ նրանք հատուկ ուշադրություն էին դարձնում ազատ ու անկաշկանդ

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

գլուխածին: Գուման դպրոցն ընդունում և գնահատում էր ժողովրդական գրականությունը և շեշտում, որ գրողները պետք է անպայման «սնունդ» ստանան տեղական լեզվով գրականությունից: Այս մոտեցումն ինչ-որ չափով արտացոլում էր նոր ի հայտ եկող քաղաքային միջին դասի գեղագիտական ճաշակները Սին ժամանակաշրջանի կեսերին:

Մեջբերում.

Երբ Ուան Շիջենի ու Լի Սենյանի պոեզիայի տեսությունները լայն տարածում գտան գրական համայնքում, Յուան եղբայրները որոշակի վերապահումներով խոսեցին դրանց մասին: Յուան Յունդառն իր գործընկեր Հուան Հույի հետ քուն կերպով հակադարձեց Ուանի ու Լիի տեսություններին: Նրանք նախապատվություն էին տալիս Թան դինաստիայի բանաստեղծ Բայ Չույիի և Սուն դինաստիայի գրող Սու Շիի ստեղծագործություններին: Յուան Յունդառն նույնիսկ իր ստուդիան անվանեց «Բայ-Սու»: Յուան Հունդառն իր հերթին ճշգրտեց իին գրական ոճերի նմանությունն իր քարմ, նորարարական գրելառնին: Դրանից հետո գրականագետների մեծ մասը հեռացավ Ուան Շիջենի ու Լի Սենյանի սկզբունքներից՝ նախապատվություն տալով «Երեք Յուաններին»: Այստեղից էլ սկիզբ առավ «Գումանի ոճ» եղույթը: (*«Սին դինաստիայի պատմությունը»*)

գումանգումսիսի 公公私私

Հանրային սեփականությունը պատկանում է հանրությանը, անհատական սեփականությունը՝ անհատներին

Եզրույթը նշանակում է, որ հանրային ունեցվածքը պատկանում է հանրությանը, անհատական ունեցվածքը՝ անհատներին: Լիեցին պնդում էր, որ հանրային սեփականությունը, ինչպես ցանկացած այլ բան, որ բնական ընթացքով ստեղծվում է երկնքի ու երկրի միջև, օրգանական ամրողու-

թյուն է, որ չի կարող բաժանվել ու տրվել պատահական անհատներին: Հանրային և անձնական շահերի հստակ տարածառությունը կատարվում է բնության օրենքի համաձայն: Հասկացությունը զարգացել է «չ-գործությամբ կառավարում» դասական փիլիսոփայությունից (սկզբունք, որով կառավարությունը պետք է առաջնորդվի երկիրը կառավարելիս), և ուղղակի կապ ունի մարդու բարոյական զարգացման աստիճանի հետ:

Մեջբերում.

Երկնքի ու երկրի միջև որևէ բան չի կարող մասնատվել: Սխալ է, եթե մարդն իրենն է համարում իրեն չպատկանող որևէ բան կամ տնօրինում է դա՝ ըստ սեփական նպատակահարմարության: Ըստ բնության և հասարակական էթիկայի նորմերի՝ հանրային ունեցվածքը պատկանում է հանրությանը, անհատական ունեցվածքը՝ անհատներին: (*«Lihsgħ»*)

Գունմին 共名

Ընդհանուր անուն

Ընդհանուր անուն ասելով նկատի ունենք այն ամենը, ինչ ներառված է նույն կարգում: Այս եզրույթը կիրառել է Սունցին (մթա. 313-238թ.), իսկ դրա հականիշը «հատուկ անունն է»: Անունը պետք է արտահայտի երևույթի կամ առարկայի եռթյունը: Սիանման հատկանիշներով երևույթները կարենի է խմբավորել «ընդհանուր անվան» տակ: Տարբեր ընդհանուր անուն, բայց միևնույն ժամանակ որոշ ընդհանուր հատկություններ ունեցող այս երևույթները կարող են ունենալ ավելի բարձր աստիճանի «ընդհանուր անուն»: Ամենաբարձր աստիճանի «ընդհանուր անունը» կոչվում է «լայն ընդհանուր անուն»:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում.

Մեր շուրջ այնքան շատ բան կա, ու երբեմն, երբ ցանկանում ենք մեկ բառով կոչել դրանք, անվանում ենք «իրեր կամ երևույթներ»: Սա լայն ընդհանուր եզրույթ է: Մենք էլ ավելի ընդհանում ենք այս ընդհանրացումը, այն ընդգրկում է ավելի շատ ընդհանրություններ, և այդպես շարունակ, մինչև այլևս ոչ մի ընդհանրություն չի մնում: («*Սունցի*»)

զոռու լի գուոցյա, բու ցիու ֆուզու 苛利国家，不求富贵

Զգուիր երկրի բարօրությանը, այլ ոչ անձնական հարստությանն ու դիրքին

Ավանդական չինական քաղաքական փիլիսոփայության մեջ սա հիմնական պահանջ է, որ ներկայացվում է պաշտոնացներին: Ըստ էության, այն պաշտպանում է այն պաշտոնացներին, որոնք չեն չարաշահում իշխանությունը՝ հանուն անձնական բարօրության, որոնք ի սրտե աշխատում են հանրության համար, երբեք չեն խուսափում պատասխանատվությունից և նվիրված են ծառայությանը, նույնիսկ եթե դա պահանջում է ինքնազնողություն:

Մեջբերում.

Պետք է օգնել կառավարչին՝ իրազործելու իր իդեալները, քայլեր ճեռնարկելու ի բարօրություն երկրի՝ առանց անձնական հարստության ու փառքի ձգտելու: («*Ծիսկրի գիրքը*»)

զու բոռու 骨、肉

Ուկրթներ և միս ու արյուն / Գրական հենք և նուրբ արտահայտություններ

Այս եզրույթներն ավանդաբար օգտագործվել են նկարչության և վայելչագրության տեսության մեջ և գրաքննադա-

տուրյան դրսում, երբ խորքը զնում է մասնավորապես աշխույժ և համոզիչ ձևին կամ ոճին, որը համադրվում է ավելի մեղմ, կանացի նոտեցումների հետ: Ֆիզիոգնոմիայում, որը տարածված էր Յին և Հան ժամանակաշրջանում, *գու (骨)* ասելով նկատի էր առնվում մարդու ոսկրային հենքը, իսկ *րոռու (肉)*՝ նշանակում էր մաշկ և միս ու արյուն: Ավելի ուշ՝ Հան, Ռու և Վեց դինաստիաներում, եզրույթը նաև օգտագործվում էր գրաքննադատուրյան մեջ: Նկարչուրյան և վայելչագրուրյան ոլորտում «ոսկորները» ուժեղ և էներգիայով լի վրձնահարվածներ էին, իսկ «միս ու արյուն» նշանակում էր թանձր քանաքի կամ ներկի օգտագործում՝ նորք ուրվագծեր ստեղծելու համար: Դրական ստեղծագործուրյան մեջ «ոսկորներ» նշանակում էր ընդհանուր կայուն ու ամուր կառուցվածք, իսկ «միս ու արյուն»՝ ցանկացած հոեսորական կամ պաշտոնական ձև, որով արտահայտվում է բուն էռուրյունը: «Ոսկորներ» և «միս ու արյուն» արտահայտուրյունները միաժամանակ հիշատակվելու դեպքում ցոյց են տալիս հենքի (այն է՝ բարոյական պատգամ և կառուցվածքային առանձնահատկուրյուններ) և գրական ստեղծագործուրյան արտահայտման նրբերանգների փոխարերական կապ: Դրանք նաև ենթադրում են գրական երկի հիմնական գաղափարի ու զգացմունքի և դրանց արտաքին գեղեցկուրյան միասնուրյուն:

Մեջբերումներ.

Սիայն աշխույժ և հզոր վրձնահարվածները ավելի նուրք արտահայտչամիջոցների հետ համադրելու դեպքում կկարողանաս հասնել ճկունուրյան բարձրագույն մակարդակի և հաղորդակցվել հոգևոր էակների հետ: (Ուան Սենցիան. «Փառարանուրյուն վայելչագրուրյան դիմամիկ գեղեցկուրյան»)

Էսսե գրելիս բովանդակուրյունն ու զգացմունքը պետք է լինեն ոգի, փաստերն ու փաստարկումները՝ ոսկրածուծ, իսկ հոեսորարանուրյունն ու բառապաշտքը՝ միս ու արյուն:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Հանգային ներդաշնակությունը կավելացնի երկի գրավությունն ու ուժը: (Լիու Սյե. «Գրական միկրոն ու վիշտապնիք բանդակելլ»)

գուայու 寡欲

Ցանկությունների սահման

Եզրույթը նշանակում է նվազեցնել արտաքին երևոյթների հանդեպ բուռն ցանկությունը: Մարդիկ հակված են չափազանց շատ ցանկություններ ունենալու, ինչը կարող է վճասել նրանց, խնդիրներ ստեղծել այլոց կյանքում ու հանգեցնել հասարակական կարգուկանոնի խաթարման: Սա է պատճառը, որ թե՛ կոնֆուցիական, թե՛ դասիստ գիտնականները խորհուրդ էին տալիս զապել ցանկությունները: Ըստ կոնֆուցիական մտածողության՝ քարոյական ինքնակրթությունը զապում է ցանկությունները, իսկ սա էլ իր հերթին ամրապնդում է մարդու առաքինությունը: Ըստ դասիսմի՝ ցանկությունների սահմանափակումը մարդկանց կօգնի վերադառնալ «բնական վիճակի»:

Մեջքերումներ.

Մեծցիուսն ասում էր. «Քարոյական ինքնակրթության լավագույն միջոցը ցանկությունների զապումն է: Քիչ ցանկություններ ունեցող մարդիկ ձեռք կրերեն առաքինություններ ու երթեր չեն կորցնի դրանք: Շատ ցանկություններ ունեցող մարդիկ արագորեն ձեռք կրերեն ու նույնքան արագորեն կկորցնեն առաքինությունները: («Մենացիուս»)

Մերժեք սրբանմանությունն ու իմաստությունը, և մեծապես կօգնեք մարդկանց. մի կողմ թողեք բարեգքությունն ու արդարամտությունը, և մարդիկ դարձյալ կդառնան հլուհնազանդ. մերժեք շրեղությունն ու շահը, և գողերը կանհետանան: Սրբանմանությունն ու իմաստությունը, բարեգքու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունն ու արդարանտությունը, շքեղությունն ու շահն ավելորդ զարդարանքներ են: Մարդիկ պետք է վերադառնան բնականն վիճակի և զսպեն ցանկությունները: («*Lungqih*»)

գուռքայ-մինան 国泰民安

Կայուն երկիր և խաղաղ ժողովուրդ

Եթք երկիրը խաղաղության մեջ է, ժողովուրդը երջանիկ կյանք է վայելում: Եզրույթն իմաստով մոտ է «խաղաղ հող» հնագույն գաղափարին: Հին ժամանակներից ի վեր այն եղել է բոլոր պարկեշտ կառավարիչների հիմնական նպատակը, ինչպես նաև տեսլական, որ փայփայում էին հասարակ մարդկա: Այս վիճակի հասնելու բանալին կայունությունն ու խաղաղությունն է: Այն նաև բարեկեցության միջոց է թե՛ երկրի, թե՛ ժողովրդի համար և արտացոլում է չինացի ժողովրդի մարդասիրական ոգին, որը փայփայում է կայունությունն ու խաղաղությունը:

Մեջքերում.

Ամեն տարի ծովի ջրերը բարձրանում և ողողում են քաղաքները: Զոհաբերական արարողությունների ժամանակ, որ կազմակերպվում էին գարնանը և աշնանը, կայսրը կայսերական ակադեմիային հրամայում էր գրել աղոքք, որում արտահայտում էր իր ցանկությունը՝ բող երկիրը լինի կայուն, իսկ մարդիկ ապրեն խաղաղության մեջ: (Ու Յիմու. «*Նորեկ անցյալի երազանքների մասին*»)

գուռ ու յուան մին յուե ցիան գուռ 国无怨民曰强国

Երկիրը, որի ժողովուրդը դժգոհ չէ, ուժեղ երկիր է

Եթք ժողովուրդը վրդովկած ու դժգոհ չէ իշխանավորներից, կարելի է ասել, որ երկիրն ուժեղ է: Սա ուժեղ պետու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյան լեզալիստական սահմանումն է: Լեզալիստները պրագ-մատիկ էին, շեշտում էին գյուղատնտեսության և ռազմական պայքարի, ուժեղ բանակ ունեցող հարուստ պետության կարևորությունը: Սակայն պետությունների ուժը նրանք չափում էին ոչ միայն քիրտ, այլև փափուկ ուժով: Փափուկ ուժի էությունն այն է, որ մարդիկ ատելություն չեն տածում իշխանավորների հանդեպ: Ատելության բացակայության նախապայմանը երկրում տիրող արդարությունն ու հավասարությունն է, իսկ արդյունքը՝ ազգային միասնությունը:

Մեջբերում.

Ուժեղ է այն երկիրը, որի ժողովուրդը վրդովկած ու դժգոհ չէ: Պատերազմական պայմաններում հաջողությունը պայմանավորված է ռազմական զործում դրսևորված արիությամբ. այս դեպքում հաղթանակն աներկրա է: Եթե երկիրը չի պատերազմում, մարդիկ պիտի զբաղվեն զյուղատնտեսությամբ. այդ դեպքում հաջողությունը պայմանավորված է հացահատիկի արտադրության ծավալներով. այս դեպքում երկիրը կրարգավաճի: Նա, ով զորք է ուղարկում ռազմի դաշտ, պարտության մատնում թշնամուն, հետ քերում զորքն ու բարեկեցություն հաստատում երկրում, կլառավարի՝ որպես ճշ-մարիտ քաջավոր: («*Չանկ ասլծո զիրքը*»)

զուտ յի յի ուեյ մի 国以义为利

Արդարությունը՝ պետության գլխավոր շահ

Պետությունը պիտի արդարությունը համարի գլխավոր շահ: Չինական փիլիսոփայության պատմության ոլորաններում արդարության և շահի մասին զրոյցները մշտապես եղել են քննարկման թեմա, քանի որ շահը հաճախ ընկալվում էր՝ որպես անհատական օգուտ, որը գուցե ձեռք է բերվել զարտուիլ ճանապարհներով: Արդարությունն ամենակարևոր առավելությունն էր, և սա հիմնական գաղափար էր,

որին հարում էին իին փիլիսոփաները: Ոչ անհատը, ոչ պետությունը չեն կարող գոյատևել առանց շահի: Սակայն հներն ընդգծում էին արդարության ու շահի համադրությունը: Նրանք հավատացած էին, որ շահը կարելի է նյութականացնել, միայն երբ այն համադրես արդարության հետ, և այս երկու գաղափարները պետք է պահպանվեն ներդաշնակության մեջ: Չի կարելի ձգտել անձնական շահի արդարության հաշվին: Ըստ այս գաղափարի՝ կառավարությունը չպետք է մրցի հասարակ ժողովրդի հետ՝ հանուն շահի, իսկ պետությունը չպետք է մրցի այլ պետության հետ՝ միայն սեփական շահի համար: Պետք է մշտապես ձգտել փոխադարձ օգնության, ընդիանուր շահերի, հավասարակշռության և փոխահավետ արդյունքի:

Մեջբերումներ.

Օգուտն արդարության ու շահերի համադրություն է: («Փոլիտուրյունների զիրքը»)

Պետության համար օգուտ է ոչ թե դրամական շահը, այլ արդարությունը: («Ծնունդի զիրքը»)

հունֆան 洪范

Գլխավոր կանոնները

Խոսքը վերաբերում է համընդհանուր հիմնարար օրենքներին, որոնց բոլոր մարդիկ հետևում են իրենց կյանքում: Եզրույթն առաջին անգամ ի հայտ է եկել «Պատմության գրքում»: Ինը մեծ կանոնից կազմված այս գիրքը մարդկային կյանքը բաժանում էր տարրեր ոլորտների, որվագծում յուրաքանչյուր ոլորտի կարևորագույն տարրերը, հետևաբար՝ նաև կարգը, որը վճռում է երկնքի ու երկրի, երիկայի ու քաղաքանության, քնության ու մարդկության հարաբերությունները: Հնում մարդիկ հավատացած էին, որ Ինը մեծ կանոնները Երկնքի կողմից օժտված են անխորտակելի իշխանությամբ:

Մեջբերում.

Եվ ահա Զիցին ասաց. «Սի անգամ Գունը, ջանալով վերահսկել ջրհեղեղները, սխալ է օգտագործում հինգ տարրերը՝ փայտը, կրակը, հողը, մետաղն ու ջուրը: Երկնքի կառավարիչը զայրանում է և նրան զրկում բոլոր Ինը մեծ կանոններից: Արդյունքում պետության կառավարման երկարատև օրենքները վտանգվում են: Գունն աքսորվում է և մահանում աքսորում: Նրա որդիին՝ Ցուն, ստանձնում է հոր պարտականությունները, ու նրան հաջողվում է սանձել ջրհեղեղները: Երկինքը նրան օժտում է Ինը մեծ կանոններով: Կարգուկանոնը վերականգնվում է շնորհիվ կառավարման վաղեմի օրենքների»: («Պակունության գիրքը»)

հուան ցայ թուրեն, բու ցայ ուացիե 患在土崩，不在瓦解

Աղետը կործանում է, որ նման է հողի փլուզման, այլ ոչ տանիքի մի քանի թուլացած կղմինդրի

Պետության համար աղետը քաղաքական իշխանության հենքի փլուզումն է, այլ ոչ թե վերին կառավարող շերտի մասնատումը: Պետական իշխանության հենքը ժողովրդի նվիրվածությունն է և հասարակության վերահսկողությունը: «Հողի փլուզում իիշեցնող կործանում» հասկացությունը փոխաբերություն է, նշանակում է իրավիճակ, երբ քաղաքական իշխանությունը զրկվել է ժողովրդական աջակցությունից, ողջ հասարակությունը կործանվում է, իսկ ժողովրդին տանում են դեպի հուսահատություն և ապստամբություն: «Տանիքի կղմինդրները թուլացել են» արտահայտությունը նշանակում է պառակում և խզումներ կառավարող օղակներում, երբ ոմանք պայքարում են հանուն իշխանության, մյուսները՝ խախտում օրենքը և նույնիսկ խոռվություն հրահրում: Կործանումը ենթադրում է ցնցել պետական իշխանության հասարակական և տնտեսական իիմքերը, չընդունել պետության օրինականությունը և գոյության իրավունքը: Այսպի-

սով, սա մի բան է, որից պետք է վախենալ: Պատակտումը, մյուս կողմից, սովորաբար հաղթահարելի է և շատ սարսափելի չէ: Քաղաքական իմաստության այս տեսակը մեծ կարևորություն է տալիս ժողովրդի կամքին և հասարակական վերահսկողությանը: Սա նման է «նախնառաջ՝ ժողովուրդը» գաղափարին:

Մեջբերում.

Կայսրության համար մեծագույն աղետը նմանեցնում են հոդի փլուզման, և ոչ թե այն դեպքերին, երբ տանիքի կոմինդրները թուլանում են: Այդպես եղել է անցյալում, այդպես է և հիմա... Եթե կայսրությունն իսկապես մոտ է կործաննանը, նոյնիսկ հասարակ քաղաքացիներն ու աղքատները երթեմն չարիք են դառնում ու վտանգում երկիրը: Չեն Շենն այդպիսի մարդկանցից եր... Նոյնիսկ եթե կարգուկանոն չկա, քանի դեռ կործանումը հեռու է, կայսրությունը կայուն ու անխախտ կմնա ու չի նվաճվի, նոյնիսկ երբ բախվի հզոր պետությունների և ուժեղ բանակների հետ: Ուն, Չուն, Ցին և Չան այդպիսի պետություններ էին: («Պատրիարքանի գրառումներ»)

ցիառյուե-սիանջան 教学相长

Գասավանդումն ու ուսումը խթանում են միմյանց

Ուսուցիչներն ու աշակերտները կատարելագործում են իրար: Հին Չինաստանում հասկանում էին, որ դասավանդումը միայն ուսուցիչների կողմից ուսանողների վրա ազդելը չէ, այլ փոխազդեցության երկվողմանի գործընթաց: Այս գործընթացում ուսուցիչներն ու ուսանողները շարունակաբար թե՛ առաջընթաց են ապրում, թե՛ կատարելագործվում: Այս գաղափարը մարմնավորումն է այն տեսակետի, որ ուսուցիչներն ու ուսանողները կարող են օգտվել փոխհամագործակցությունից, ինչը նման է արդի կրթության մասին պատկերացումներին:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում.

Սովորելու ընթացքում հայտնաբերում ես թերություններդ, իսկ դասավանդելիս պարզում, որ դեռ կատարելագործվելու տեղ ունես: Երբ իմանում ես թերություններդ, կարող ես մտածել դրանց մասին ու կատարելագործվել. երբ գիտես, որ դեռ կատարելագործվելու տեղ ունես, կարող ես քրտնաշան աշխատել ու վերացնել թերությունները: Ուստի մենք հավատացած ենք՝ սովորեցնելն ու սովորելը փոխադարձաբար օգնում են իրար: («Ծիսկի գիրքը»)

զուսիան-ոռունջուն 举贤容众

Խոսիր առաքինի մարդկանց օգտին ու մեծահոգի եղիր զանգվածների հանդեպ

Պետությունը լավ կառավարելու համար կառավարիչը պետք է ընտրի ու ներգրավի աչքի ընկնող առաքինություններով ու տաղանդով օժտված մարդկանց: Սակայն նա պետք է հանդուրժող ու ներառական մոտեցում ունենա սովորական առաքինություններով և ընդունակություններով օժտված մարդկանց նկատմամբ: Սա «արժանավորին զուգարանելու» և «կարենկից լինելու» ավանդական չինական քաղաքական հասկացությունների հաջող համադրություն է:

Մեջբերում.

Պետք է սովորել՝ բազմակողմանի ու անվերջ, երբեք չհոգնել ձգտելուց: Երբեք տեղի չտալ սահմարձակությանը, նույնիսկ երբ ապրում ես մեկուսացման մեջ և գործում ես մենակ, և երբեք չշեղվել ճանապարհից, նույնիսկ երբ բարձրանում ես ծառայողական սանդուղքով: Պետք է գործել էթիկայի կանոնների համաձայն, գնահատել մեծահոգությունն ու ներդաշնակությունը, հավատարմությունն ու ազնվությունը համարել առաքինություն, հանդուրժողականությունն ու քա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

լեզործությունը՝ չափանիշ: Պետք է խոսել ի օգուտ առաքի-նության ու տաղանդի, ու միևնույն ժամանակ հանդուրժել և մեծահոգի լինել պարզ առաքինությամբ ու ընդունակություն-ներով օժտված մարդկանց հանդեպ: Եթե պետք է, կարելի է նույնիսկ մի կողմ դմել սկզբունքները, եթե այդպես է ցանկա-նում հասարակությունը: («Ծեսերի զիրքը»)

Չունցի յի յի ուեյ ջի 爵子义以为质

Արդարությունն էական է առաքինի մարդու համար

Առաքինի մարդու արդարությունն ընդունում է՝ որպես հիմ-նարար սկզբունք, որով առաջնորդվում է իր գործողություն-ներում: «Առաքինի մարդ» ասելով նկատի ունենք բարձրաս-տիճան պաշոնյաներին կամ մարդկանց, որոնք օժտված են մեծ տաղանդով կամ բարոյական որակներով: Արդարամ-տություն նշանակում է բարոյականություն և արդարություն, ինչպես նաև ածանցյալ հասկացություններ, ինչպիսիք են հասարակական նորմերն ու պարտավորությունները: Այս հասկացությունը ցույց է տալիս, որ վերնախավի որակները երևում են նրանց արդար գործողություններից և հասարա-կական պատասխանատվությունից:

Մեջքերում.

Կոնֆուցիոն ասում էր. «Առաքինի մարդու արդարամ-տությունը համարում է իր գործողություններն ուղղորդող հիմնարար սկզբունք, բարոյականության ու արդարության սկզբունքները գործնականում կիրառում ըստ էթիկայի կա-նոնների, բարոյականությունն ու արդարությունը դրսերում զգուշորեն ու խոհեմաքար, ազնվորեն իրազործում է բարո-յագիտության և արդարության կանոնները: Ահա թե ինչպի-սին է առաքինի մարդը»: («Անալեկլիգներ»)

Չունցի Չիցիան
君子之交

Առաքինի մարդկանց հարաբերությունները

Առաքինի մարդկանց հարաբերությունները ճիշտ հակադրությունն են մանր ու չնչին մարդկանց հարաբերությունների: Առաջիններն օժտված են բարոյական ամբողջականությամբ, իսկ նրանց հարաբերությունները հիմնված են ընդհանուր արժեքների վրա: Այս հարաբերությունները, թվում են, մտերմիկ չեն, բայց իրականում ամուր են ու խոր: Երկրորդ խումբը բնորոշվում է ցածր բարոյական բնութագրով, իսկ նրանց հարաբերությունները հիմնված են անհատական շահի վրա: Դրանք գուցել մտերմիկ են թվում, բայց արագ կավարտվեն, երբ այլևս որևէ շահի ակնկալիք չի լինի: Առաքինի մարդկանց հարաբերությունները հնագույն ժամանակներից ի վեր փառարանվում են չինացիների կողմից: Եզրույթը տարբերակում է բարոյական ամբողջականությունն ու անձնական շահերի հետապնդումը և առաքինի ու մանրախնդիր մարդկանց հարաբերությունները հասարակական փոխազդեցությունների համատեքստում: Այն ներկայացնում է բարոյական ամբողջականության արժեքները, որոնք հատուկ են առաքինի մարդկանց՝ միևնույն ժամանակ պահարարակելով մանրախնդիր մարդկանց եսասիրական նկատումները:

Մեջբերումներ.

Առաքինի մարդկանց հարաբերությունները վճիռ են, զրի պես մաքուր, իսկ մանրախնդիր մարդկանց հարաբերությունները՝ զինու պես քաղցր: Առաքինի մարդիկ արագ են մտերմանում, մանրախնդիր մարդիկ՝ հեշտությամբ պառակտվում: («Չունցի»)

Առաքինի մարդկանց հարաբերությունները զրի պես պարզ են, իսկ մանրախնդիր մարդկանց հարաբերությունները՝ զինու պես քաղցր: Առաջինն օգնում է հասնել հաջողու-

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացությունները

թյան, երկրորդը հանգեցնում է տարածայնությունների: («Ծիսիրի զիրքը»)

Առաքինի մարդկանց հարաբերությունները հիմնված են ընդհանուր արժեքների և ձգումների վրա: Ուստի այս մարդիկ ընկերանում են: Նրանց կապն այնքան էլ ամուր չէ, բայց հասուն է: Մանրախնդիր մարդկանց հարաբերությունները հիմնված են իշխանական կապերի և եսասիրական շահերի վրա: Այս մարդկանց միջև գուցե կան մտերմիկ կապեր, բայց նրանք իրականում չեն հարգում իրար: Եվ նրանց հարաբերությունները հեշտությամբ են խզվում: (Գե Հովն «Քառիուցիք»)

Կուն-Յան զի լե 孔颜之乐

Կոնֆուցիոսի և Յանհոյի երջանկությունը

Խոսքը Կոնֆուցիոսի (մթա. 551-479թ.) և նրա աշակերտ Յանհոյի (մթա. 521-490թ.) երջանկության ու գոհունակության մասին է: Կոնֆուցիոսի և Յանհոյի երջանկությունը մտավոր աշխարհայացք էր, որով իխանում ու որը պաշտպանում էին կոնֆուցիական գիտնականները, հատկապես Սուն և Մին դինաստիաների ներկոնֆուցիականները: Մարդկանց մեծամասնությունը ցանկություն չունի հաշտվել աղքատության հետ, բայց աղքատիկ նյութական պայմանները չեն կարող ստվերել Կոնֆուցիոսի և Յանհոյի երջանկությունը: «Կոնֆուցիոսի և Յանհոյի երջանկություն» արտահայտությունն այն ներքին ուրախությունն ու երջանկությունն է, որ ձեռք ես բերում նյութական ցանկություններն անդրանցելիս և երկնքի ու բարյայագիտության սկզբունքները խորապես ընկալելուց և դրանց ձգտելուց:

Մեջքերումներ.

Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե ուտելու համար հում ցորեն ունեմ, խմելու համար՝ սառը ջուր, իսկ ծալված թևս բարձ է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ինձ համար, այս ամենի մեջ պեսք է ուրախություն գտնել: Զարտողի ճանապարհներով ձեռք բերվող հարստությունն ու պատիվն ինձ լողացող ամայ է թվում»: (*«Անալեկտուներ»*)

Կոնֆուցիոն ասաց. «Հիրավի առաքինի է Յանհույը: Պարզ ուտելիք է ուտում, միայն սառը ջուր խմում ու ապրում է պարզ ու հասարակ հյուտակում: Եթե ուրիշներն այսպիսի կյանքն անտանելի կիամարեին, Յանհույը երջանիկ է: Ի՞նչ առաքինի մարդ է»: (*«Անալեկտուներ»*)

ի 力

Ուժ / Ընդունակություն

Եզրույթը նշանակում է մարդկային ուժ կամ ընդունակություն: Ուժ ասելով նկատի ունենք մեկ մարդու, կազմակերպության կամ երկրի իշխանությունը: Ուժը վերահսկողություն է կամ ազդեցություն, որ մարդն ունենում է իր կամ այլոց վրա: Այն չպետք է կիրառվի ուժեղների կողմից որպես քույլերին սպառնալու գործիք, այլ պետք է գործարկվի՝ ըստ բարոյական չափանիշների և առաքինության պահանջների: Հնարավորության դեպքում մարդիկ պիտի ջանան հաղթահարել խոչընդոտներն ու դժվարությունները՝ ձգտելով իրագործել նպատակները և միևնույն ժամանակ պահպանելով այս չափանիշներն ու պահանջները: Սակայն մարդկային ուժն ունի իր սահմանները. եթե ինչ-որ բան մարդու ուժից կամ ունակություններից վեր է, ապս դա ճակատագիր է, և այլևս կարիք չկա հալածել այն:

Մեջքերումներ.

Կոնֆուցիոն ասում էր. «Արյո՞ք կան մարդիկ, որոնք մի օր ուղղակի որոշում են բարյացակամ ու բարեգութ դառնալ: Ես երբեք չեմ հանդիպել մեկին, ով զորկ է այդ ունակությունից: Գուցե այդպիսի մարդիկ կան, բայց ես նրանց չեմ հանդիպել»: (*«Անալեկտուներ»*)

Հարկադրանքը կարող է մարդկանց բերել ընդհանուր համաձայնության, ոչ թե որովհետև նրանք այդպես են ցանկանում, այլ որովհետև դիմադրելու ուժ չունեն. սա առաջինություն է, որին մյուսներն ուրախությամբ ու պատրաստակամորեն կիետնեն, ինչպես Կոնֆուցիոսի ավելի քան յոթանասուն աշակերտները, որոնք նրա հետևորդը դարձան անկեղծ հարգանքից դրդված:

«*Միջացիուս*»

Ա Բ

Գյուքիչ հմայք

Գյուքիչ հմայք գաղափարն ունի բազում իմաստներ, օրինակ՝ համաշափություն, գեղեցկություն, ճնշություն և նվիրվածություն: Այն շրեղության, բարդ ու խրդին գեղեցկության և գունագեղության գեղագիտական առանձնահատկությունն է՝ դասական շինական գեղագիտության զիսավոր բաղադրիչը: Ոճարանության տեսանկյունից՝ եզրույթը նշանակում է նրբագեղություն և շքեղ գեղեցկություն: Ինչ վերաբերում է վայելչագրությանը, այն ենթադրում է նրբագեղ ճաշակ և նուրբ հմայք, որ թաքնված է շինական տառանշանների արտաքին կառուցվածքի ետևում և գեղեցկության զգացողություն է առաջացնում: Ինչ վերաբերում է երաժշտությանը, ոյութիչ հմայքն ի հայտ է զալիս հրաշակերպ մեղեդում՝ դասական նազանքով ու հանգստությամբ:

Մեջբերում.

Բանաստեղծների երգերն օժտված են բացառիկ գեղեցկությամբ ու համապատասխանում են երաժշտական ստեղծագործության օրենքներին: Մյուս կողմից, հանրահայտ քնարերգակների երգերը չափից դուրս պերճ են: (Յան Սյուն. «*Օրինակելի ասացվածքներ*»)

մին ու սին բռւ լի 民无信不立

Առանց ժողովրդի վստահության պետությունը չի գոյատևի

Առանց ժողովրդի վստահության կառավարությունը կայուն չի լինի: Զինացիները հնագույն ժամանակներից բարձր են զնահատել «Վստահությունը» (հավատարմությունը): Կոնֆուցիոսն այն օգտագործում էր պաշտոնյաների և ժողովրդի հարաբերությունները մեկնարանելիս և այն դիտարկում՝ որպես պետության կայունության վճռական գործոն: Սա նշանակում է, որ կառավարությունը կամ կառավարիչը պետք է ազնիվ լինեն մարդկանց հետ շփումներում, և չգործեն ամիսնեմարար՝ ուժի կամ իշխանության դիրքերից, որպեսզի ժողովուրդը վստահի իշխանություններին և հավատընծայի նրանց հանդեպ: Սա է պետական իշխանության ամուր հիմքն ու երաշխիքը: Սա նաև «Ժողովուրդը պետության հիմքն է» գաղափարի շարունակությունն է:

Մեջքերում.

Ցիզունը հարցնում է, թե ինչ է անհրաժեշտ կառավարման մեջ: Կոնֆուցիոսն ասում է. «Քավարար ուտելիք, բավարար գենք և կառավարի համեստ ժողովրդի վստահություն»: Ցիզունը հարցնում է. «Եթե այլընտրանք չլինի, և ստիպված լինեմ մեկից հրաժարվել, առաջինը ինչի՞ց հրաժարվեմ»: Կոնֆուցիոսն ասում է. «Հրաժարվիր գենքից»: Ցիզունն ասում է. «Եթե այլընտրանք չլինի, և ստիպված լինեմ երկուսից մեկից հրաժարվել, ինչի՞ց հրաժարվեմ»: Կոնֆուցիոսն ասում է. «Հրաժարվիր ուտելիքից: Մահը եղել է, կա ու կլինի, բայց եթե մարդիկ վստահություն չունենան, պետությունը չի գոյատևի»: (*«Անալեկտուներ»*)

մումե 木讷

Պարզ և խոսքերի մեջ չափավոր

Այս երկու չինական տառանձնաներից առաջինը նշանակում է պարզ և ազնիվ, երկրորդը՝ խոսքերի մեջ չափավոր: Մարդիկ պետք է ընդունեն բարյական չափանիշերը ողջ սրտով, և ոչ թե առերես ընդունեն՝ ներքուստ ձգտելով փառքի ու շահի: Պարզ և խոսքի մեջ չափավոր լինելն ընդգծում է ունայնությունը մերժելու, հավակնութ վարքագծից ու հուսուրաբանությունից խուսափելու և սեփական բարյական կերպարը զարգացնելու վճռականությունը: Կոնֆուցիական գիտնականները բարի, ազնիվ և խոսքի մեջ չափավոր լինելը համարում են կարևոր առաքինություն, որը մոտ է բարյացակամության պահանջներին: Այս կոնկրետ համատեքստում «պարզ ու խոսքերի մեջ չափավոր» լինելը չի ենթադրում նեղմտություն կամ զադենապահություն:

Մեջքերում.

Կոնֆուցիոն ասում էր. «Ամուր, վճռական, պարզ ու խոսքի մեջ չափավոր. այդպես կարելի է դառնալ բարյացական / բարեգործ»: («Անալիկունիր»)

Յու-Սուն 屈宋

Յու-Սուն դրւետը

Յուն և Սունն այստեղ համապատասխանաբար Յու Յունը (մթա. 340-278թ.) և Սուն Յուին են. երկուսն էլ Պատերազմող պետությունների ժամանակաշրջանում Չու պետության բանաստեղծներ էին: Առաջինը Չուցի պոեզիայի առաջարտիկ էր («Չուի ներքողները» կամ «Հարավի երգերը») և մեծ ոռմանտիկ բանաստեղծ: Նրա ամենահայտնի ստեղծագործությունը կոչվում էր «Լի Սառ»: Երկրորդը, որին կո-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

չում էին Յոի աշակերտ, Յոի մահից հետո գերազանցության հասավ Չու ոճի *ցի* և ֆու պոեզիայում. նրա ամենահայտնի ստեղծագործությունը «Զիու Բիանն» էր («Ինը բանաստեղծական տուն» կամ «Ինը փոփոխություն»): Հետագա սերունդները նրանց անվանում էին Յու-Սուն, չնայած Սուն Յուի գրական ձեռքբերումները զգալիորեն զիջում էին Յու Յուանի ձեռքբերումներին:

Մեջքերումներ.

Ուան Բաոյի «Զիու Հուայից» («Ինը բանաստեղծական տուն շերմ հուշերի մասին») հետո գրված բոլոր չափածո ստեղծագործությունները Չուցի բանաստեղծական ոճում կրկնված էին Յուանին և Սուն Յուին, բայց ոչ ոք չի հասել կատարելության նրանց մակարդակին: (Լիու Սյե. «Գրական միլքն ու վիշապներ քանդակելլ»)

Սիմա Սիանբուն գրքերի սիրահար էր: Նա որպես նմուշ ընտրել էր Յու Յուանի և Սուն Յուի ստեղծագործությունները և շքեղ ու գեղեցիկ սեփական պոեզիա էր ստեղծել: Այսպիսով, նրան սկսեցին մեծարել՝ որպես *ցի* և ֆու պոեզիայի մեծ վարպետ: (Լիու Սյե. «Գրական միլքն ու վիշապներ քանդակելլ»)

թեն և

Մարդ արարած / Մարդկություն

Ստեղծման պահից ի վեր չինական և տառանշանը մարդասիրական ոգով ներշնչված մարդ արարածի խորհրդանիշն է: Հնագույն ձևով այն նման էր մարդու, որը կանգնած է՝ մարմինը վորք-ինչ առաջ թեքած, ձեռքերը՝ կողքերին, համեստ ու քաղաքավարի: Մարդիկ մտածելու ունակություն ունեն, հետևաբար հասկանում են, որ մարդը քույլ է և չի կարող միայնակ գոյատել, ուստի մարդիկ պեսք է համագործակցեն: Հին չինացի մտածողները հավատացած էին, որ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մարդ արարածը տիեզերքի երեք խոշոր բաղադրիչներից մեկն է, իսկ մյուս երկուսը երկինքն ու երկիրն են: Մարդկությունն աշխարհի ոգին է. հետևաբար, մարդ արարածը մյուսներից ամենաառանձնահատուկն է: Բազմաթիվ հնագույն հասկացություններ, մասնավորապես քաղաքականության և էթիկայի ոլորտներում, հիմնված են հենց այս մարդասիրական ոգու վրա:

Մեջքերումներ.

Եվ այսպես, մարդ արարածներն ունեն հատկանիշներ, որոնք շնորհված են երկնքի ու երկրի կողմից: Սա ինի ու յանի միաձուլումն է, ձևի ու ոգու համադրությունը, հինգ տարրերի՝ մետաղի, փայտի, ջրի, կրակի ու հողի մարմնավորումը... Հետևաբար, մարդկությունն աշխարհի ոգին է՝ առաջնը հինգ տարրերից ստեղծված բոլոր երևույթների մեջ: («Ծեռակի զիրքը»)

Բոլոր բնական երևույթներից մարդ արարածն ամենաականավորն է: («Լիհցի»)

Մարդկային էությունն ամենաայդրահատուկն է երկնքի ու երկրի միջև բոլոր երևույթներից: (Սու Շեն. «Զեռուզրի բացաւրություն և լրացանցաների մեկնարանություն»)

թեն ֆու թիան շու 人副天数

Մարդը պիտի համահունչ լինի բնության հետ

Մարդու ֆիզիկական կառուցվածքը, զգացմունքներն ու էրիկական նորմերը պետք է համապատասխանեն բնության կառուցվածքին ու կարգին: Մարդու և բնության համապատասխանության տեսությունն առաջադրել է Դուն Զունչուն (մթա. 179-104թթ.): Նա հավատացած էր, որ երկնքի ու երկրի միջև ամեն ինչ և նրանց փոխգործակցությունն ունեն իրենց հատուկ կառուցվածք ու կարգ: Մարդու մարմինը, զգացմունքները, մտածողությունը, գործողություններն ու

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

էթիկական նորմերը, այսինքն՝ ամեն ինչ համապատասխանում է բնության կառուցվածքին ու կարգին, մասնավորապես թվերի տեսանկյունից: Այս տեսության համաձայն՝ մարդ արարածները ոչ այլ ինչ են, եթե ոչ բնության պատճենը: Դունի գաղափարը հիմք ապահովեց մարդկանց և բնության փոխազդեցության համար:

Մեջքերում.

Մարդիկ ունեն 366 փորք հոդ, ճիշտ և ճիշտ տարվա օրերի քանակով: Ունեն 12 մեծ հոդ, ինչպես տարվա 12 ամիսները, իննական օրգան, ինչպես իննական տարրերը: Չորս վերջույթ, ինչպես տարվա եղանակները: Նախ, բացում ենք մեր աշքերը, ապա փակում, ճիշտ ինչպես գիշերն ու ցերեկն են հաջորդում իրար: Սի պահ վճռական ենք, հաջորդ պահին՝ մեղմ, ինչը հիշեցնում է ձմռան ու ամռան հերթագայությունը: Մերք վշտանում ենք, մերք՝ ուրախանում, ինչպես ինն ու յանը: Ունենք ծրագրեր ու մտահոգություններ, որոնք նման են երկնաքի ու երկրի գործողություններին: Գործելիս հետևում ենք եթիկայի կանոններին՝ ըստ երկնքի ու երկրի կարգի: Այս ամենը հատուկ է մեզ ծննդի պահից ի վեր: Մարդիկ և բնությունը մի շարք առումներով համընկնում են: Այլ ոլորտներում, որոնք հնարավոր չեն արտահայտել թվերով, մեր ներքին կառուցվածքը համապատասխանում է բնությանը: Թե՛ հաշվելի, թե՛ անհաշվելի բազում առումներով մարդը համապատասխանում է բնության օրենքներին: (Դուն Չունչու. «*Գարան և աշնան լարեկորքերի շրեղ գոհարմները»)*)

բենջե-ուղի

仁者无敌

Բարեգութ մարդն անպարտելի է

Բարեգութ մարդը թշնամի չունի: Խոսքը վերաբերում է բարեգրությամբ/բարյացակամությամբ օժտված կառավարչին կամ բարեգրությամբ կառավարվող պետությանը: Ինչ

վերաբերում է քաղաքական հարցերին, բարեգթոթյունը դրսևորվում է մարդկանց հանդեպ սիրով ու հոգածությամբ, սահմանափակ պատիժների կիրառմամբ, ավելի թերև հարկերով և մարդկանց հնարավորինս մեծ բարիք բերելով։ Այսպես կառավարիչը կարժանանա ժողովրդի աջակցությանը, նրա և իր ենթակաների միջև կստեղծվի ամուր միասնություն, և պետությունն անպարտելի կլինի։ Հիմնական սկզբունքն այն է, որ պետության ուժի աղբյուրն իր ժողովրդի սիրուն ու միտքը նվաճելն է. պետությունն ի վիճակի կլինի ուժ ստանալ այս աղբյուրից ու հզորանալ, միայն եթե հոգա ժողովրդի մասին։

Մեջքերում.

Մենցիուաղ պատասխանեց. «Հարյուր քառակուսի լի տարածքի դեպքում ինչ-որ մեկը կարող է կառավարել՝ որպես իսկական բազավոր։ Եթե Ձերդ մեծությունը կառավարում է բարեգթոթյամբ, ձեռնպահ է մնում դաժան պատժից, թերևացնում ժողովրդի հարկերն ու տուրքերը, մարդիկ ամենայն մանրամասնությամբ կիերկեն հողը և կմաքրեն մոլախոտից։ Ամրակազմ մարդիկ ազատ օրերին հոգ կտանեն ծնողների մասին, կդրսևորեն որդիական սեր, հավատարմություն ու ազնվություն։ Տանը կծառայեն իրենց հայրերին ու եղբայրներին, իսկ տնից հեռո՛ւ ավագներին ու վերադասներին։ Նրանք Ցինի և Չուի զորքերին կհաղթեն նույնիսկ փայտերով։ Ուստի իմ կարծիքով՝ բարեգութ մարդն անպարտելի է»։ («Սենցիուս»)

շան սիա բուն յու ջեն շեն 上下同欲者胜

Հաղթանակը գալիս է, եթք առաջնորդներն ու հետևորդներն ունեն լնդիանուր նպատակ

Սա կարևոր հասկացություն է, որն առաջադրել է Հին Չինաստանի մեծ ռազմավար Սուն Ռուն։ Անկախ գրադեցրած

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

պաշտոնից կամ դիրքից՝ պետության մեջ, բանակում կամ նույնիսկ աշխատանքում, մարդիկ պիտի ունենան ընդհանուր ձգողությունը, կամք ու նպատակ: Միայն այդ դեպքում նրանց իմաստությունը կմեկտեղվի, ու կովելու ունակությունը լիարժեք կրրսնորպի: Այս հասկացությունը շեշտում է մարդկային ոգու և համերաշխության կարևորությունը՝ մարմնավորելով չինական հիմնական գաղափարներից մեր՝ «նախնառաջ՝ ժողովուրդը»:

Մեջբերում.

Գոյություն ունի ճակատամարտում հաղթանակը կանչագորշակելու հին միջոց: Հաղթանակի կարելի է հասնել՝ իմանալով, թե ինչ պայմաններում կարելի է կամ չի կարելի գնալ ճակատամարտի, հասկանալով, թե ինչ ձկուն մարտավարություն է պետք կիրառել հաղթանակի հասնելու համար, հիմնվելով տրամադրությանդ տակ եղած զորքի քանակի վրա: Հաղթանակի կարելի է հասնել, եթե սպաներն ու զինվորները մեկ ամբողջություն դառնան, եթե լավ մարզված զորքը հարձակվի անպատրաստ թշնամու վրա, ու եթե հրամանատարները տաղանդավոր և ընդունակ լինեն, իսկ միապետը չմիջամտի: (*«Unisig»*)

Հիշու քի դառ 识书之道

Վայելչագրության որակը որոշելու միջոց

Խոսքը վայելչագրության ստեղծագործական արժեքը որոշելու մասին է: Ուան Սենցիանը (426-485թ.) Հարավային դինաստիայից և Զան Հուայգուանը (տարեթվերն անհայտ են) Թան դինաստիայից պնդում էին, որ վայելչագրությունը (գեղագրությունը) գնահատելու հիմնական չափանիշը հոգևոր աշխուժության առկայությունն է. Վրձնից և թանաքից օգտվելու ձևը երկրորդական է: Երկրուսն էլ գնահատում էին վայելչագրական աշխատության պատկերավորու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունը և կառուցվածքային ամբողջականությունը և անտեսում մակերեսային վայելչության և գործնական օգտակարության գործոնները: Այս նախապատվությունը հին չինական վայելչագրությունը գնահատելու կարևոր չափանիշ է:

Մեջբերումներ.

Հրաշալի գեղագիրը մտահոգվում է վայելչագրական ստեղծագործության բնածին հմայքով, այլ ոչ թե տառանշանների արտաքին տեսքով: Եթե խորապես ուսումնասիրենք վայելչագրական տեքստի հոգևոր խորքն ու կենսունակությունը, բոլոր աննկատ մնացած կողմները նույնապես նկատելի կդառնան: (Զան Հուայգուան. «Տառանշանների մասին՝ վերլուծելի բաղադրիչներով և առանց դրանց»)

Իմաստությունը սահմաններ չունի. օրենքները ոչ մի դեպքում քարացած չեն: Բոլոր գեղագրական ստեղծագործությունները, որոնք օժտված են առանձնահատուկ գրավչությամբ, կենսունակությամբ, կառուցվածքային ամբողջականությամբ և համընդգրկուն ներգործությամբ, գերազանց են, իսկ նրանք, որոնց միակ նպատակը արտաքին շուրջ ու գործառական համապատասխանություն ապահովելն է, ցածրորակ երկեր են: (Զան Հուայգուան. «Մեկնաբանություններ գեղագրության մասին»)

շիյի-շիյի **世异事异**

Ժամանակները փոխվում են, հասարակական պայմանները՝ նույնապես

Սա նշանակում է՝ մոտեցումները հարմարեցնել փոխվող պայմաններին: Ասացվածքը «Հանֆեյցիի» «Հինգ վնասատու» գլխից է: Ըստ այս ստեղծագործության՝ հասարակական պայմանների բազմաթիվ փոփոխություններ տեղի են ունենում ժամանակների փոփոխությանը համահունչ, և մարդիկ պետք է համապատասխանաբար հարմարեցնեն

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

իրենց մոտեցումները՝ ոչ թե ուղղակի հետևելով նախորդ պրակտիկային, այլ շարժվելով նոր զարգացումներին համընթաց: Լեզալիստական դպրոցի գիտնականների մեծ մասը կիսում էր այս տեսակետը: Այս փաստարկը ներշնչանքի աղբյուր էր նրանց համար, ովքեր ձգտում են բարեփոխումների և արդիականացման:

Մեջբերումներ.

Երբ հասարակական պայմանները փոխվեն, գործողությունների կատարման եղանակը նույնական այլ կինի: (*«Ծանօթ ասկրծո զիրքը»*)

Հեռավոր անցյալում Զոռուի Ունի թագավորն ուներ ընդամենը 100 քառակուսի լի տարածք Ֆենի և Հառյի միջև: Բարեգրությամբ և արդարանտությամբ նա խաղաղեցրեց Ունի ցեղերին արևմուտքում, ապա դարձավ երկնքի տակ բոլորի կառավարիչ: Սուի Յան թագավորը Հանշոյ գետից արևելք 500 քառակուսի լի տարածքով հողակտոր ուներ: Նա նույնական գործում էր բարեգրության և արդարության սկզբունքներով, իսկ երեսունվեց պետությունները տուրք էին տալիս նրան՝ առաջարկելով տարածքներ: Զինի Ունի թագավորը վախենում էր, որ Սուի թագավորը կարող է սպառնալիք լինել իր համար. հետո նա հարձակվեց Սուի վրա և գրավեց այն: Այսպիսով, Ունի թագավորը բարեգրությամբ ու արդարությամբ կառավարեց երկնքի տակ ամեն ինչ, իսկ Յան թագավորը կիրառեց նույն սկզբունքը, բայց կորցրեց իր թագավորությունը: Պատճառն այն է, որ բարեգրությունն ու արդարությունը կիրառելի էին իին ժամանակներում, բայց ոչ այսօր: Ըստ տարածված տեսակետի՝ երբ հասարակական պայմանները փոխվում են, փոխվում է նաև գործողությունների եղանակը: (*«Հանֆեյցի»*)

շու զե, սան յե 书者，散也

Վայելչագրությունն արտահայտում է ներքին վիճակը

Լավ գեղագիր դառնալու համար պետք է, նախ, կենտրոնանալ, ապա հեռացնել բոլոր շեղող մտքերը: Այս փաստարկը բարձրացրել է Արևելյան Հանի հայտնի գեղագիր Յայ Յունը (133-192թ.): Իր «Գեղագրական ձեռագրի մասին» աշխատության մեջ: Նա ասում է, որ վայելչագրության արվեստը երևան է հանում գեղագրի անձնական զգացմունքները՝ շեշտելով սեփական անկեղծ էությունը բացահայտելու և կյանքի ողջ բժոհից ու գործնական նկատառումներից ազատվելու անհրաժեշտությունը: Ըստ այս տեսակետի՝ այս գործողությունները վճռական դեր ունեն վայելչագրական ստեղծագործությունների հաջողության մեջ:

Մեջբերումներ.

Գործնական վայելչագրությամբ զբաղվելու համար, նախ, պետք է ազատ արձակել զապված զգացմունքները, ազատվել բոլոր շեղող մտքերից: Վրձինը բորբն մոտեցնելուց առաջ գրողին խորհուրդ են տալիս, նախ, բացել սիրտն ու ազատություն տալ երևակայությանը: Սիայն այդ դեպքում կարելի է ակնկալել, որ նա կկատարի հանձնարարված առաջադրանքը: Եթե դժմանորեն անի, նոյնիսկ օգտագործելով նապատակի մազերից պատրաստված վրձին Զունշանից, միևնույն է, չի հաջողվի հրաշալի գեղագրական երկ ստեղծել: (Յայ Յուն. «Վայելչագրության մասին»)

Վայելչագրությամբ զբաղվելիս նա պետք է ամբողջությամբ անտեսի այն ամենը, ինչ կատարվում է դրսում, ազատվի անհանգստությունից ու մտահոգությունից, կենտրոնացնի իր էներգիան, մաքրագործի միտքն ու շնչի կատարյալ թերևությամբ: Սիայն այդպես կկարողանա իսկական արվեստի գործ ստեղծել: Եթե նրա միտքը քառային վիճակում է, ձեռագիր տառանշանները ծուռումուն կլինեն.

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ
եթե շնչառությունն անհանգիստ է, աշխատանքը կձախող-
վի: (Լի Շիմին. «Վայելչագրության արհեստը»)

Չույմոհուա 水墨画

Թանաքանկարչություն(Գոհուա)

Խոսքը վերաբերում է նկարչական ոճի, որտեղ օգտագործվում են թանաքային ստվերաներկեր, իսկ գույների օգտագործումը հասցված է նվազագույնի: Այն հայտնի է նաև ավանդական չինական կամ զուտ չինական նկարչություն անունով: Օգտագործվող նյութերն են՝ թանաք ու ջուր, նկարչական վրձին և բրնձաքություն: Ջրի ու թանաքի հավասար չափաբաժնների և թաց ու չոր, մուգ ու բաց, հաստ ու բարակ վրձնահարվածների շնորհիվ վերջնական պատկերը ձեռք է բերում գույնի ինտենսիվության զանազան աստիճաններ: Թանաքանկարը ստվորաբար արվում է միայն թանաքով ու ջրով, միայն սև ու սպիտակ է: Մյուս կողմից, ավելի մանրամասն մշակված թանաքանկարներում կարելի է տեսնել ճոխ երանգներով ծաղիկներ ու բռչուններ. այս ոճը հայտնի է «գունավոր թանաքանկարչություն» անունով: Ընդհանուր առմամբ չինական թանաքանկարչությունն իմարեսինիստական է, երբ պատկերում է եեռու առարկաներ, իսկ մոտ առարկաներ պատկերելիս ռեալիստական է: Գունային հակարությունների հմուտ դեկավարման և ստեղծագործական մթնոլորտի միջոցով նկարիչը երևան է հանում նկարի «հոգևոր կենացնակությունը»:

Մեջբերումներ.

Թանաքանկարչությունը նկարչական բոլոր տեխնիկաների «սերուցքն» է: Օգտվելով թանաքի ու ջրի բնական հատկություններից՝ այն ստեղծում է երկնքի ու երկրի հրաշագործ պատկեր: Մոտ մեկ տասնյակ դյույմանոց նկարը բավարար է՝ մի թանի հազար լի երկարությամբ բնապատկեր ցուցադրե-

լու համար: Այն ընդգրկում է աշխարհի բոլոր ծագերի գեղատեսիլ հմայքը՝ եղանակային փոփոխությունները պատկերելով նկարչական վրձնի հարվածների միջոցով: (Ուան Ուեյի, «Նկարչական առեղծվածներ» գրքի նախաբան)

Ես տեսել եմ Ուան Ուեյի հեղինակած մի քանի քնապատկեր, որոնք նկարվել էին «այլընտրանքային տեխնիկայի» միջոցով, մասնավորապես բաց գույնի թանաքը փոխարինելով մուգ թանաքով կամ հակառակը, կամ բաց թանաքը փոխարինելով չոր թանաքով: Նրանք ինձ ցնցեցին իրենց աշխուժությամբ ու համարձակությամբ: (Զան Յանյուան. «Գրառումներ իին հայրնի նկարների վերաբերյալ»)

շուն ու բու սին, գուն ու բու չե 顺无不行，果无不彻

Երբ այն, ինչ ասում ես, հիմնավոր է, չկա մի բան, որ չես կարող չիրագործել: Երբ վճռական ես գործում, հասնում ես հաջողության:

Այն, ինչ հիմնավոր է ու արդարացի, կստացվի. վճռական գործելու դեպքում հաջողությունն ապահովված է: Այս դրույթն ընդգծում է այն գաղափարը, որ արդար ու վճռական գործելը հնարավորություն է տալիս ի վերջո իրագործել նպատակը, ինչը նման է այն ժամանակակից տեսակետին, որ մարդիկ պետք է հարգեն օբյեկտիվ օրենքները և միշտ նոր խրանիչ ուժեր փնտրեն:

Մեջբերում.

Երբ այն, ինչ ասում է մարդը, հիմնավոր է, չկա մի բան, որ նա չի կարողանա չիրագործել: Եթե վճռական գործի, անպայման հաջողության կիասնի: Իր անելիքը հիմնավորող մարդուն նեղացնելը ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Հաջողության չեք հասնի, եթե հարձակվեք մեկի վրա, ով վճռական է իր գործերի մեջ: («Դիսկուրսներ պելությունների կառավարման շուրջ»)

սուուեյ էք սին 素位而行

Արա այն, ինչ հարմար է տվյալ իրավիճակին

Մարդիկ պետք է գործեն՝ ըստ դիրքի ու իրավիճակի: Ասում են՝ այս արտահայտությունը ծագել է «Ոսկե միջինի դոկտրինից»: Տարբեր հանգամանքներում մարդիկ տարբեր պարտականություններ ունեն, որոնք պետք է կատարել, և տարբեր օրենքներ, որոնց պետք է հետևել: Նրանք կարող են ներքին բարոյականությունը դրսողել պարտականությունների պատշաճ կատարմամբ: Ուստի արտաքին շահը չպետք է մարդուն ստիպի ձգտել այն կարգավիճակի, որը վայելում են մյուսները. փոխարենը պետք է գոհանալ սեփական կյանքով և օգտագործել ողջ ներուժը ըստ իրավիճակի, որում հայտնվել ես:

Մեջքերում.

Առաքինի մարդիկ անում են այն, ինչ համապատասխան է իրենց դիրքին ու հանգամանքներին, որում հայտնվել են: Հարուստն անում է այն, ինչ պիտի անեն հարուստները. աղքատն անում է այն, ինչ պիտի անեն աղքատները. Եթք այլ ցեղերի մեջ են ապրում, վարփում են այնպես, ինչպես այդ ցեղերի անդամները. բարդ իրավիճակում վարփում են այնպես, ինչ վայել է տվյալ իրավիճակին: Առաքինի մարդիկ զոհ կմնան ցանկացած իրավիճակում, որում կհայտնվեն: («Ծնողի զիրքը»)

թիանմին-մինչան 天命靡常

Երկնքի շնորհած գերագույն իշխանությունը հավերժական չէ

Եզրույթն առաջին անգամ հանդիպում է «Երգերի գրքում»: Այն նշանակում է, որ չկա մեկը, ով կարող է մշտապես օժտված լինել Երկնային կառավարչի գերագույն իշխանու-

թյամբ: Հին ժամանակներում մարդիկ հավատացած էին, որ երկնային կարգն է վճռում, թե ում է պատկանում գերագույն թագավորական իշխանությունը: Սակայն այդ շնորհը չի կարող հավերժական լինել: Չան դինաստիայի փոխարինումը Զոու դինաստիայում տեղի ունեցավ Երկնքի ընտրյալի փոփոխության միջոցով, որին շնորհվեց կառավարման մանդատ: Սակայն մանդատը ստացողի փոփոխությունը կատարվում էր սահմանված սկզբունքի համաձայն: այն կարող էր շնորհվել միայն առարջնի կառավարչի: Իսկ եթե վերջինս զրկվում էր առարջնությունից, կառավարելու մանդատը վերցվում էր նրանից: Հետևաբար, Երկնքի մանդատը ստացողի փոփոխությունը զգուշացում էր կառավարչին, որը նա մշտապես զարգացնի բարոյական նկարագիրը, եթե ուզում է մշտապես պահպանել կառավարման մանդատը:

Մեջքերում.

Այսպիսով, Յինի պաշտոնյաները դարձան Զոուի հաստակներ: Սա կատարվեց ըստ օրենքի, որը հաստատում է՝ չկա մեկը, ով կարող է մշտապես կրել Երկնքի կողմից շնորհվող կառավարելու մանդատը: Յինի պաշտոնյաները՝ առողջ ու փութկոտ, սև-սպիտակ նախշերով ասեղնազործ կոստյումներով և ավանդական գլխարկներով, եկան մայրաբանակ՝ ծիսական արարողություններին նախնական մասնակցելու: Սի՞թե նրանք, որոնց հիմա Զոուն նշանակել էր պաշտոնների, չպետք է երախտապարտ լինեն նախնիների առարջնության համար: («Երգերի գիրքը»)

թիան թեն գանյին 天人感应

Բնությունն ու մարդիկ արձագանքում են միմյանց

Մարդիկ և բնությունն արձագանքում են միմյանց: Տեսությունն առաջ է քաշել Դուն Զունշուն (մթա. 179-104 թթ.), որը ժառանգել էր իր նախնիների մտածողությունը և հավատում

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

էր, որ նմանատիպ բնույթ ունեցող երևույթներն արձագանքում ու հակագրում են իրար: Ըստ նրա՝ մարդիկ բնության պատճենն են, հետևաբար՝ արձագանքում են իրար: Բնության փոփոխություններն ազդում են մարդկանց և նրանց գործունեության վրա: Մարդու գործողություններն ու խոսքը, ինչպես նաև մարդկային հասարակության կարգուկանոնը կամ քառաս արտացոլվում են բնության մեջ աստղագիտական նշաններով: Եթե պետության կառավարիչը դավաճանություն է արել, հնարավոր է՝ ի պատասխան դրա աղետ կամ անքնական երևույթներ պատահեն: Այս տեսությունը հիմք ընդունելով՝ Դուն Չունշուն փորձում էր կառավարչին համոզել կառավարման մեջ առաջնորդվել առաքինությամբ՝ վկայակոչելով պատմական աղետները կամ անքնական երևույթները:

Մեջբերում.

Լինում են ամպամած օրեր և արևոտ օրեր: Ու նոյն կերպ նաև, մարդը կարող է ունենալ բարձր տրամադրություն կամ ընկճված լինել: Եթե բնության մեջ գարշահոտություն է բարձրանում, անառողջ օդի ազդեցության տակ մարդկանց ներսում գլուխ է բարձրացնում տիրությունը: Նոյն պատճառով էլ, եթե վիշտը հալբում է մարդուն, բնության մեջ գարշահոտություն է տարածվում: (Դուն Չունշու. «Գարման և աշնան դարեկորքերի շրեղ գոհարթներ»)

թիանուեն 天文

Համաստեղությունների և տարվա եղանակների օրենքները / Աստղագիտություն

Եզրույթը, որն առաջ է եկել «Փոփոխությունների գրքից», վերաբերում է համաստեղությունների շարժումը և եղանակի փոփոխությունը կառավարող օրենքներին: *Թիանուեն* (天文) եզրույթը նշանակում է կայուն օրենքներ, որոնք կառավա-

ըում են երկնային մարմինների շարժումները, տարվա չորս եղանակների պատույտը, ցերեկվա ու զիշերվա հաջորդականությունը և եղանակի փոփոխությունը։ Հին չինացիները հավատացած էին, որ թե՝ մարդկային հարաբերությունները, թե՛ տիեզերքում ամեն ինչ կառավարվում է նույն օրենքներով, և այսպես, պահպանելով համատեղությունների և տարվա եղանակների օրենքները և հետևելով դրանց՝ մարդկային կարող են հասարակական կարգ սահմանել։

Մեջքերումներ.

«Փոփոխությունների գիրքը» նկարագրում է երկնքի ու երկրի օրենքները։ Նայելով վեր՝ աստղերին, ու վար՝ երկրին, կարելի է տեսնել, թե ինչն է ենթադրվում, ու ինչն է ակնհայտ։ («Փոփոխությունների գիրքը»)

Երկնային օրենքով է, որ ամուրն ու փափուկը միահյուսվում են. մարդկային կառավարման շնորհիվ է, որ դրանք ենթարկվում են ծեսերին ու զապվածություն դրսերում։ Համաստեղությունների շարժումն ուսումնասիրելով՝ կարող ենք իմանալ տարվա եղանակների փոփոխության մասին. մարդկային մշակույթի զարգացումն ուսումնասիրելով՝ կարող ենք կրթել մարդկանց ու կառուցել քաղաքակիրք հասարակություն։ («Փոփոխությունների գիրքը»)

թիանսիա նայ թիանսիա զի թիանսիա 天下乃天下之天下

Երկնքից ներքև ամեն ինչ պատկանում է մարդկանց

Երկնքի տակ ամեն ինչ պատկանում է աշխարհի բոլոր մարդկանց. երկիրը պատկանում է երկրի ողջ ժողովրդին։ «Երկնքից ներքև ամեն ինչ» արտահայտությունն այստեղ կարող է ընկալվել՝ որպես երկիր կամ երկրի բարձրագույն իշխանություն։ Հնում մարդկային համարում էին, որ երկնքի տակ ամեն ինչ պատկանում է ոչ առանձին մարդու, ոչ էլ առանձին ընտանիքի, այլ բոլոր մարդկանց։ Նա, ով գործում

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Էր ըստ բարոյականության ու արդարության օրենքների ու բարեգութ էր երկնքի տակ ապրող բոլոր մարդկանց հաճդեա, արժանի էր ունենալ ու կառավարել երկնքի տակ ամեն ինչ: Սա ենթադրում է երկնքից շնորհված իրավունքներով և առարջնությամբ կառավարելու հասկացությունները: Ժամանակից համատեքստում սա կարելի է ընկալել հետևյալ կերպ. աշխարհը պատկանում է աշխարհի բոլոր մարդկանց. յուրաքանչյուր երկիր և յուրաքանչյուր մարդ իրավունք ունի մասնակցել կառավարմանը:

Մեջբերում.

«Երկնքի տակ ամեն ինչ» հասկացությունը ենթադրում է, որ աշխարհը ոչ թե մեկ մարդու, այլ ողջ ժողովրդի համար է: Նա, ով գործում է հօգուտ մարդկանց, ստանում է երկնքի տակ ամեն ինչ. նա, ով իրեն է վերագրում երկնքի տակ բոլոր բարիքները, կորցնում է ամեն ինչ: (*«Վեց ուազմակարությունները»*)

ուեյբիան-սանջուն 韦编三绝

**Փայտե գրատախտակներն ամրացնող կաշվե փոկերը
երեք անգամ են պոկվում**

Հին Չինաստանում մարդիկ իրադարձությունների մասին արձանագրություններ էին անում բամբուկից կամ փայտից գրատախտակների վրա: Ապա դրանց վրա փոքր անցքեր էին բացում և որոշակի հերթականությամբ կաշվե փոկերով միմյանց ամրացնելով՝ գիրք պատրաստում: Ըստ «Պատմաբանի գրառումների»՝ Կոնֆուցիոսը մեծ տարիքում ազահորեն կարդում էր «Փոփոխությունների գիրքը»: Նա այնքան հաճախ էր օգտվում այս գրքից, որ փայտե տախտակները միմյանց ամրացնող կաշվե փոկերը երեք անգամ պոկվեցին: Հետագայում եզրույթը կիրառվում էր ջանասիրաբար ընթերցող մարդուն նկարագրելու համար:

Մեջբերում.

Մեծ տարիքում Կոնֆուցիոսը սիրում էր ուսումնասիրել «Փոփոխությունների գիրքը»... Նա այնքան էր կարդացել այս գիրքը, որ փայտե գրատախտակներն իրար կապող կաշեփոկերը երեք անգամ պոկվել էին: (Սիմա Ցիան. «Պակմաբանի գրառուսները»)

ուեյ ձի զի սյուե 为己之学

Ուսում՝ հանուն ինքնակատարելագործման

Եզրույթը վերաբերում է ինքնազարգացման, ինքնակատարելագործման նպատակով ուսմանը: Կոնֆուցիական գիտնականներն ուսումը դիտարկում են մեր բարոյական կյանքը բարելավելու միջոց: Ուսումնասիրելով դասական ստեղծագործությունները և էրիկայի կանոնները, սովորելով իմաստուններից՝ կարող ենք մշտապես կատարելագործել մեր բարոյական նկարագիրը և իդեալական կերպար ձևավորել: Հետևաբար, սովորելն ինքնազարգացման գործնիք է, որն արվում է մեր իսկ օգտին: Ուսման ձգտումը նպատակ չունի ցուցադրել մեր գիտելիքը կամ առաքինի վարք դրսնորել որևէ շահի դիմաց:

Մեջբերումներ.

Կոնֆուցիոսն ասում էր. «Հին ժամանակներում մարդիկ սովորում էին՝ սեփական բարոյական նկարագիրը զարգացնելու համար: Այսօր սովորում են ուրիշների վրա տպավորություն բողնելու համար»: («Անալիկուսներ»)

Ընդհանուր առմամբ, ինքնակատարելագործման նպատակով ուսումը կապ չունի այլոց հետ: Այն ամենը, ինչ ասում էին իմաստունները, ի վերջո նպատակ ուներ օգնել մարդկանց վերականգնել իրենց սկզբնական, ներհատուկ էությունը: («Վարպետ Զու Սիի զրույցների ընդունակություններ»)

Գիտական նկարչություն

Խոսքը վերաբերում է այն նկարներին, որոնք հեղինակել էին իին շինացի գիտնականներ և գրողներ. դրանք տարբերվում էին պրոֆեսիոնալ կամ պալատական նկարիչների նկարներից: Սա շինական ավանդական նկարչության ենթակարգ է, հայտնի է նաև «գիտական նկարչություն», «հարավային դպրոցի նկարչություն» կամ պարզապես «հարավային նկարչություն» անունով: Չնայած Սուն դինաստիայի նշանավոր բանաստեղծ Սուն Շին (1037-1101թթ.) առաջինն էր, ով առաջարեց այս գաղափարը, Սին դինաստիայի նկարիչ և գեղագիր Դուն Ցիշանը (1555-1636թթ.) Թան դինաստիայի բանաստեղծ Ըստ Ուեյին (701?-761թթ.) էր համարում գրական նկարչության խսկական առաջամարտիկ: Այս կտավների հեղինակները ստվորաբար ներշնչանք էին ստանում սարերի, գետերի, ծառերի, ծաղիկների ու թռչունների գեղատեսիլ պատկերներից՝ կենտրոնանալով իրենց սուրյեկտիվ ընկալումներն ու ներքին զգացմունքներն արտահայտելու վրա: Նրանց ստեղծագործություններն երբեմն արտահայտում էին իրենց վրդովմունքն ու դժգոհությունը որոշակի հասարակական երևոյթներից: Ընդգծելով վրձնի ու բանաքի հետ հմտորեմ աշխատելու կարևորությունը՝ գրական նկարչությունն, այնուամենայնիվ, անցնում էր ձևի ու տեխնիկայի սահմանները՝ կտավին հաղորդելով խսկան ճաշակ և կենսունակություն:

Մեջբերում.

Գիտական նկարներն ուսումնասիրելը նման է քառարովի արշավող նժույգներին հետևելուն. պետք է ընտրել միայն այն ստեղծագործությունները, որոնք հրաշալի են թե կառուցվածքով, թե՝ պատկերված տեսարանով: Միջակ նկարիչը չափից դուրս ուշադրություն է դարձնում մանրություններին՝

եղանի ու նազ, ձիու մտրակ, կերատաշտ, անասնակեր և այլն, որոնք չեն կարող որևէ զգացմունք առաջացնել մեր մեջ: Այդպիսի նկարի տապա դյուլմն ուսումնասիրելուց հետո կիոզնենք: Սուն Հանձիեի ստեղծագործություններն ինքնին ցույց են տալիս իսկական գիտնականի ներքին որակմերը: (Սու Շի. «Սու Դունիոյի մեկնաբանությունները Գրական և նկարչական սրեղծագործությունների մասին»)

ուենջի 文质

Չև և բովանդակություն

Մարդիկ և երևոյթները գոյություն ունեն ձևի և բովանդակության մեջ. բովանդակությունը ներկայացնում է բուն էությունը, իսկ ձևը՝ արտաքինը: Կոնֆուցիական գիտնականները հաճախ օգտվում են «ձևից ու բովանդակությունից»՝ ծեսերի արտաքին տեսքն ու էությունը նկարագրելու համար: Արտաքին «ձևը» պետք է իիմնված լինի ներքին «բովանդակության» վրա, որովհետև բովանդակությունից անջատ ու մեկուսի՝ ձևը ցուցադրական է: Միևնույն ժամանակ, ձևն անհրաժեշտ է ներքին բովանդակությունը ներկայացնելու համար: Այն պետք է համընկնի ու համապատասխանի բովանդակությանը:

Մեջքերումներ.

Կոնֆուցիոն ասում էր. «Երբ ներքին աշխարհը գերազանցում է արտաքինը, մարդն անմշակ տեսք է ունենում. երբ արտաքին գրավչությունը գերազանցում է ներքին աշխարհը, մարդը մակերեսային է թվում: Միայն ներքին աշխարհի և արտաքին գրավչության հավասարակշռության դեպքում մարդը կարող է առաքինի լինել: («Անալեկութեր»)

Սկզբունքորեն բովանդակությունը նախորդում է ձևին, հետևաբար, բովանդակությունն այնտեղ է, որտեղ ծեսի բուն էությունն է: (Չու Սի. «Անալեկութերի դարբերակներ»)

ուղյուռ 卧游

Վայելիր բնապատկերները՝ առանց ֆիզիկապես ճանապարհորդելու

Նկարիչները հաճախ հիանում են բնանկարներով՝ գերադասելով դա իրական վայրեր ճանապարհորդելուց: Երբ Հարավային դինաստիայի նկարիչ Յուն Բինը (375-443թթ.) ծերունական հիվանդության պատճառով այլևս չէր կարող ճամփորդել դեախ սարեր ու գետեր, սկսեց նկարել բնության պատկերներ, որոնք մի ժամանակ տեսել էր, ապա նկարները կախում էր պատից՝ այդպես իրականացնելով այդ գեղեցիկ վայրերը ևս մեկ անգամ տեսնելու իր երազանքը: Եզրույթը նկարագրում է սարերը և գետերը սիրելու ավանդույթը հին ժամանակների մտավորականների շրջանում, ամրապնդում է կյանքում արվեստի նշանակությունը և խրանում նկարչական արվեստը:

Մեջքերումներ.

Յուն Բինը վերադարձավ Զիանլին՝ բուժվելու: Խոր հոգոց հանելով՝ ասաց. «Ես ծեր եմ ու հիվանդ, ուստի դեպի հայտնի սարեր ու գետեր ճամփորդելը հիմա իմ ուժերից վեր է: Սիակ բանը, որ կարող եմ անել, հոգիս ազատ արձակելն ու ներս նայելն է՝ ծշմարտություն գտնելու համար: Նոյնիսկ անկողնուս մեջ պառկած՝ կարող եմ նայել բնապատկերներին ու պատկերացնել, թե իրականում այնտեղ եմ»: Եվ այսպես, նա պատից կախում էր բոլոր նկարները, որ նկարել էր այդ վայրերում: («Հարավային դինաստիաներից Սուն դինաստիայի պատրմություններ»)

Սեղանիս հատապտուղներ ու քրիզանթեմներ, ձեռքիս՝ զինի, քափառում եմ ես պատերից կախած բնապատկերներով՝ անկողնուս մեջ պառկած: (Նի Յան. «Գու Չունցին այցելում է ու դեսնում, որ պարուն Սուն լիարժեք ապարհնակել է»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ու յուն զի յուն 无用之用

Անպիտան թվալու առավելությունը

Եզրույթը նշանակում է՝ անպիտան երևա, եթե ուզում ես պահպանել կյանքը։ Զուանցիի (մթա. 369-286թթ.) կարծիքով՝ կան բազում ունակ մարդիկ, որոնք հաճախ ստիպված են ուսերին կրել բազմաթիվ պարտականություններ։ սա հանգեցնում են ավելի մեծ դժվարությունների ու վտանգների, որոնք վնաս են հասցնում մարդու ֆիզիկական և մտավոր առողջությանը։ Ըստ Զուանցիի եզրահանգման՝ հրաժարվելով օգտակար լինելու ցանկությունից, ցույց տալով սեփական անպիտանությունը՝ կարելի է խուսափել մարդկային աշխարհի վտանգներից՝ այդպիսով պահպանելով կյանքը։

Մեջքերում.

Սարի լանջին աճած ծառերը կարծես խնդրում են կացնահարել իրենց, լամպի յուղը լույս է տալիս ինքն իրեն այրելով։ Դարչնի ծառի կեղևն ուտելի է, հետևաբար հատվում է, լաքի ծառն օգտակար փայլ է տալիս, հետևաբար կտրվում է։ Բոլոր մարդիկ գիտեն օգտակարության առավելությունները, բայց ոչ ոք չգիտի՝ ինչ առավելություններ ունի անպիտանությունը։ («Զուանցի»)

Ու դայ դան ֆեն 吴带当风

Ու նկարում սաշեները տարութերվում են, ինչպես քամուց

Թան դինաստիայից Ու Դաոցիի (680-759թթ.) վրձնահարվածներն այնքան ոլոր-մոլոր էին ու նրբագեղ, որ թվում էր՝ նրա նկարներում պատկերված մարդկանց սաշեները տարութերվում են քամուց։ Գու Զայշիի համեմատ (345-409թթ.) Ուի նկարչությունն ավելի նույր է ու ճշմարտանման։ Նա վրձինն օգտագործում էր կատարյալ թերևությամբ ու

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

սահունությամբ: Նրա ստեղծագործությունները դիմամիկ են ու վառ, ներկայացնում են միանգամայն նոր ոճ ու գեղագիտական ազդեցություն՝ արտացոլելով նկարչական արվեստի զարգացումը:

Մեջբերումներ.

Ու Դառցիի նկարների հերոսների սաշեները մեղմորեն տարութերվում են, ինչպես քամուց, իսկ Յառ Չունդայի նկարներում կպչում են մարմիններին, ասես մարդիկ հենց նոր են ջրից դուրս եկել: (Գոյու Ռուտու. «Երևույթներ և դեպքեր նկարչության պատրմություններ»)

Ու Դառցին երանգներ էր ավելացնում հաստ թանաքով գծերին: Այստեղ ու այնտեղ մեղմ վլծնահարվածների շնորհիվ նրա նկարի բոլոր հերոսները քնական ու ճշմարտանման են թվում, ասես ուր որ է դուրս կգան նկարից: Հետազա ժամանակներում այս ոճն անվանում էին «Քամուց տարութերվող սաշեներ» ցուցադրելու Ռութ արտաստվոր հմտություն»: (Թան Հոու. «Գնահատիկով անցյալի ու ներկայի որոշ կրավաճեր»)

ուսին սիան շեն 五行相生

Հինգ տարր, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ստեղծում է մյուսը

Եզրույթը վերաբերում է հինգ հիմնական տարրերին, որոնցից յուրաքանչյուրը ծնունդ է տալիս հաջորդին: Հինգ հիմնական տարրերն են՝ փայտ, կրակ, հող, մետաղ և ջուր: Աշխարհում ամեն ինչ կազմված է այս հինգ տարրերից կամ կրում է դրանց հատկությունները: Ըստ այս գաղափարի՝ փայտը ստեղծում է կրակ, կրակը՝ հող, հողը՝ մետաղ, մետաղը՝ ջուր, իսկ ջուրը՝ փայտ: Նույն կերպ նաև, այս հինգ տարրերի հատկանիշները կրող երևույթների միջև նմանատիպ հարաբերություններ են:

Մեջբերում.

Հինգ տարրերը կարելի է համեմատել հինգ պաշտոնական դիրքերի հետ: Դրանց կից երևույթները ծնունդ են առնում որոշակի հաջորդականությամբ: Եթե երևույթներն ի հայտ չեն գալիս որոշակի կարգով, յուրաքանչյուրը ստուգում է հաջորդին: Այս սկզբունքը կիրառվում է նաև պետության կառավարման մեջ և բոլոր հասարակական հարցերում: Զառան ավելանում է, եթե հինգ տարրերի կարգը խախտվում է. խաղաղությունը գերակշռում է, եթե հինգ տարրերը դասավորված են ճիշտ կարգով: (Դուն Զունշու. «Գարնան և աշնան լրացրելի շքեղ գոհարները»)

ուսին սիան շեն 五行相胜

Հինգ տարրերը հաղթում են միմյանց

Սա վերաբերում է այն գաղափարին, որ հինգ տարրերը հաջորդաբար գերիշխում են միմյանց, ինչը նաև նկարագրում է «հինգ տարրեր, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ստուգում է հաջորդին» արտահայտությունը: «Հինգ տարրերը» հինգ հիմնական նյութական տարրերն են՝ փայտ, կրակ, հող, մետաղ և ջուր: Ըստ այս հասկացության՝ ջուրը ստուգում է կրակը, կրակը՝ մետաղը, մետաղը՝ փայտը, փայտը՝ հողը, իսկ հողը՝ ջուրը: Նոյն կերպ նաև այս հինգ տարրերի հատկություններով օժտված երևույթները նոյնական համապատասխան հարաբերությունների մեջ են: Օրինակ, այս տեսությամբ կարելի է բացատրել դինաստիաների փոփոխությունները:

Մեջբերում.

Հինգ տարրերը կարելի է համեմատել հինգ պաշտոնական դիրքերի հետ: Դրանց կից երևույթները ստեղծվում են որոշակի հաջորդականությամբ: Եթե դրանք չեն առաջացել

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

որոշակի կարգով, յուրաքանչյուրը կստոգի հաջորդին: Այս սկզբունքը նաև կիրառվում է պետության կառավարման մեջ և բոլոր հասարակական հարցերում: Քասոն ավելանում է, եթե հինգ տարրերի դասավորությունը խախտվում է. խաղաղությունը գերիշխում է, եթե հինգ տարրերը ճիշտ են դասավորված: (Դուն Չունչու. «Գարնան և աշնան դարեկանքի շքեղ գոհարները»)

ույին 五音

Հինգ նոտա

Եզրույթը վերաբերում է հինգ երաժշտական նոտաներին, որոնք ասատիճանաբար բարձրանում են՝ գուն (宮), շան (商), ջուե (角), ջի(徵)և յու (羽), որոնք այսօրվա երաժշտական նոտագրմամբ համապատասխանում են 1-ին, 2-րդ, 3-րդ 5-րդ և 6-րդ նոտաներին: Եթր ջի մինուսը դրվում է ջիից առաջ, իսկ գուն պլյուսը՝ յուից հետո, հնգատոն համակարգը դառնում է վեցատոն: Երաժշտական նոտաների այսպիսի բաժանումը ծնում է զանազան մեղեղիներ: Թեև հնգատոն համակարգի վրա հիմնված չինական դասական երաժշտությունն այդքան էլ չի տարբերվում, այն պահպանում է պարզ, մեղմ ու լիրիկական ոճն ու գեղեցկությունը: Ինչպես հին ժամանակների մշակված երաժշտությունն ու ժողովրդական երգերն էին հիմնականում ստեղծվում հնգատոն համակարգով, այնպես էլ այս եզրույթը հաճախ նշանակում էր առհասարակ երաժշտություն:

Մեջքերումներ.

Գառ Ջիանլին հարվածեց ջու գործիքին: Ջին Ջեն երգեց ոիքմով՝ արտաքերելով ջի-մինուս նոտան: Ովքեր տեսան նրան, արտասվեցին: («Պատերազմող պեղությունների ուսամնավարությունները»)

Գույնի հորդումը գիշապտույտ է առաջացնում. ոչ ներ-

դաշնակ մեղենին վնասում է լսողությունը, շատ ուժելիքը բրացնում է համի զգացողությունը. անզուսպ ձգտումը հանգեցնում է ինքնավերահսկողության կորստի, իսկ արժեքավոր առարկան ստեղծում է այն գողաճակություն: Հետևաբար, իմաստունը, բավարար չափով ուժելուց հետո, չի փնտրի զգայական հածույքներ: Ավելին, նա կիրաժարվի նյութական հարմարավետության ձգտելուց և կգոհանա պարզ կյանքով: («*Losingqəh*»)

Երբ միահյուսվում են տարբեր գույների մետաքսաթեկեր, ստեղծվում է ասեղնազործության հրաշալի նմուշ: Երբ հինգ երաժշտական նոտաները ճիշտ են դասավորված, հորինվում է գեղեցիկ մեղեղի: Երբ հինգ զգացմունքներն արտահայտվում են ողջ հզորությամբ, ստեղծվում է գեղեցիկ ստեղծագործություն: Այս ամենը չափազանց բնական է ու ակնհայտ: (Լիու Սյե. «Գրական միուրեն ու վիշապներ քանդակելը»)

սի թ

Պրակտիկա

Սի (Թ) հշանակում է իմացություն ձեռք բերել հաճախակի պրակտիկայի միջոցով: Պրակտիկան ուսման կարևորագույն մասն է և անհրաժեշտ է գիտելիք ու հմտություններ ձեռք բերելու համար: Ըստ կոնֆուցիական մտածողության՝ սին հիմնականում էքիկայի, ծեսերի ու բարոյական պահանջների կանոնավոր պահպանումն է: Այն զարգացնում է խոսրի ու գործողությունների սովորություններ, որոնք պահանջվում են բարոյական ամբողջությամբ օժտված մարդուց:

Մեջքերումներ.

Սի՞թե հաճելի չէ ժամանակ առ ժամանակ գործնականում կիրառել սովորածը: («Անալեկդուներ»)

Կոնֆուցիոն ասում էր. «Մարդու էությունը նույնն է ծնն-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ
դի պահին, այն փոխվում է հետազայտմ՝ շրջապատում ձեռք
բերած պրակտիկայի արդյունքում»: («Անալիկունիր»)

սիուն 戏文

Հարավային օպերա/ Օպերային ստեղծագործություն

Եզրույթը վերաբերում է հարավային Չինաստանի օպերային: Սա տեղական օպերայի տեսակ է, ձևավորվել է ավանդական ժողովրդական երգերի ու պարերի հիման վրա ու տարածված է Չինաստանի հարավարևելյան ծովափնյա տարածքներում Հյուսիսային Սուն դինաստիայի վերջից մինչև Մին դինաստիայի վերջ և Ցին դինաստիայի սկիզբ: *Սիունիր* (戏文) մեծ տարածում գտավ հյուսիսային Չինաստանի Սուն և Ցուան դինաստիաներում. ժողովրդականություն էր վայելում նաև բանաստեղծական դրաման՝ երաժշտության նվազակցությամբ: Հետազայտմ Հարավային օպերան զարգացավ ու վերածվեց Մին և Ցին դինաստիաների լեզենդների: Այս հնագույն և հասուն օպերային ոճը լավագույնս ներկայացնում է ավանդական չինական օպերան: *Սիունիր* նաև վերաբերում է ավանդական չինական օպերաների սցենարին:

Մեջբերումներ.

Հարավային Սուն դինաստիայում Ցուանի անունով մի վանական Ուենչոպուի Ցուեցին կոմսությունում բռնանում էր տեղացիների վրա: Մարդիկ դժգոհ էին նրանից, ուստի նրա շարագործությունների մասին օպերայի սցենարը գրեցին, որպեսզի ավելի շատ մարդիկ իմանան սրիկայի մասին՝ հուսալով, որ այդպես նա ի վերջո կկանգնի արդարադատության առաջ: (Չոռմի. «Իմ քալիառող գրառումների հավաքածուն Հանգջոռուից»)

Օպերայի սցենարը Սուն դինաստիայում բաղկացած է երգերից, սողերից ու կատակներից: (Միա Թինջի. «Կուրպիկանների կենսագրությունների նախարան»)

սիանշու 象数

Խորհրդանշաններ և բվեր

Խոսքը վերաբերում է գուշակության մեջ օգտագործվող խորհրդանշաններին և բվերին: Խորհրդանշանները եփած կրիայի խեցու վրա բացվող ճեղքերն են, իսկ բվերը որոշվում են գուշակության մեջ օգտագործվող ցողուններից: Խորհրդանշաններն ու բվերն ապագան կանխագուշակելու հիմնական միջոցն են: «Փոփոխությունների գրքում» խորհրդանշանները գուշակության խորհրդանիշ են, իսկ բվերը՝ ինի ու յանի գույզ և կենսու բվերը և գուշակության ցողուններով որոշվող բվեր: «Փոփոխությունների գրքի» որոշ մեկնարաններ կողմ են տիեզերքում բռնոր փոփոխությունները հասկանալու համար խորհրդանշանների և բվերի օգտագործման պրակտիկային:

Մեջբերումներ.

Եփած կրիայի խեցու մեջ ճեղքերը խորհրդանշաններ են, իսկ գուշակության ցողունները ներկայացնում են բվեր: Խորհրդանշանները պայմանավորված են իրերի արտաքին տեսքով. խորհրդանշաններն ավելանում են, բվերը՝ նոյնապես: («Յունիկոդ մեկնարանությունները Գարնամ և աշխանարկութերի մասին»)

Հեքսագրամի տողերը փոփոխության նշաններ են. կենսու և գույզ բվերը միմյանց հաջորդում ու համակցվում են: Հասկանալով փոփոխությունները, որ տեղի են ունենում հեքսագրամի տողերում, մենք սկսում ենք ընկալել աշխարհի փոփոխությունների մոդելները: Եթե բռնոր հնարավոր թվային համադրությունները սպառվում են, պարզվում է աշխարհի ամբողջական պատկերը: («Փոփոխությունների գիրքը»)

սիառձիե 小节

Երկրորդական սկզբունքներ

Եզրույթը վերաբերում է վարքագծի նորմերին, որոնք պահպանվում են առօրյա կյանքում: Ի տարրերություն հիմնական սկզբունքների՝ Երկրորդական սկզբունքները ասելով նկատի են առնվում մասնավոր կանոնները և վարքագծի չափանիշները, ինչպես նաև հասարակական կարգավիճակով պայմանավորված առօրյա պարտականությունները և դրանց իրագործման կոնկրետ եղանակները: «Երկրորդական սկզբունքներն» այն օրենքներն են, որոնք մարդիկ պարտավոր են պահպանել առօրյա կյանքում: Դրանք ինքնին հիմնավոր նշանակություն չունեն, բայց դրանց անտեսումը կհանգեցնի ոչ պատշաճ վարքագծի: Այնուամենայնիվ, եթե հիմնական սկզբունքները մշտապես պահպանվեն, կարիք չի լինի զրադարձ Երկրորդական սկզբունքներով:

Մեջքերումներ.

Բարձր բարոյական չափանիշներ ունեցող մարդք չախտի պատասխանատվություն կրի Երկրորդական սկզբունքներին չհամապատասխանելու համար. բարձր հեղինակությամբ մարդուն չպետք է հանդիմանել մասը թերությունների համար: (*«Հուսյանացի»*)

Նա, ով պահպանում է թե՛ հիմնական, թե՛ Երկրորդական սկզբունքները, գերազանց կառավարիչ է: Նա, ով պահպանում է հիմնական սկզբունքներն ու երբեմն անտեսում է Երկրորդական սկզբունքները, այնքան էլ լավ կառավարիչ չէ: Եթե որևէ մեկին չի հաջողվում պահպանել հիմնական սկզբունքները, նույնիսկ եթե նա կատարում է Երկրորդական սկզբունքների պահանջները, նրան պետք է անտեսել: (*«Սունկի»*)

սիառշուշան 戏文

Միջանկյալ ամփոփում

Այս եզրույթը, որ հնարել է Լի Յուն (1611-1680թթ.), վերաբերում է պիեսի առաջին կեսի վերջին տեսարանին: Ենթադրում է պիեսի առաջին կեսի եզրափակման անհրաժեշտությունն ու դրա իրագործման տեխնիկական միջոցները: Բացի կառուցվածքային ամբողջականությունից՝ այս հասկածն աչքի է ընկնում նրանով, որ բոլոր կերպարներն ու իրադարձություններն արդեն իսկ հայտնվել կամ հավոր պատշաճի ներկայացվել են, և ոչ մի ընթացիկ իրադարձություն չպիտի ընդհատվի առանց լուրջ պատճառի: Սինչ այդ հիմնական հակասությունները պետք է բացահայտված լինեն՝ բոլնելով գաղտնիքներ, որոնք պիտի բացահայտվեն ավելի ուշ և անորոշության մեջ պահեն հանդիսատեսին: Սի քանի մասից դրամատիկ ստեղծագործություններում, ինչպես նաև չափազանց երկար ժողովրդական գործերում այս տեխնիկան հաճախ օգտագործվում էր՝ հանդիսատեսի հետաքրքրասիրությանը ժամանակավորապես հազորդ տալու համար, կամ ստիպելու, որ գուշակեն, թե ինչ կլինի հետո:

Մեջքերումներ.

Պիեսի առաջին կեսի վերջում սյուժետային զարգացումը պետք է ընդհատվի, ու կոչնազմգերի ու թմբուկների աղմուկը մի պահ դադարի: Հենց սա է կոչվում «միջանկյալ ամփոփում»: Տվյալ դեպքում սյուժեն պետք է լինի մանրամասն մշակված, և ոչ ծգված, իսկ մքնոլորտը պետք է լինի աշխույժ, և ոչ թե տրոտում: (Լի Յու. «Պալահական գրառումներ ժամանակի պահերին»)

Ցիյոնի՝ Սին դինաստիայի «Բուրավետ նեֆրիտ» օպերայի գլխավոր կերպարի կողքին Յուշենն է և չորս-հինգ այլ հարճ: Այս կանայք չեն կարող խաղալ իրենց դերերն այս տեսարանում, և նույնիսկ ներկայացման ավարտին լիովին

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

չես ընկալում նրանց կերպարները: Այսախով, որոշ կերպարներ հասնում են ճանաչման, մյուսներն ավելորդ են թվում: (Յի Բիառձիա. «Մին դինաստիայի դրամայի մեկնաբանությունը Յուանշան սրուղիայից»)

սիառջուան

小篆

Մանր տպատառ գիր

Մանր գիրը կամ տպագրության համար նախատեսված գրի տեսակը գեղագրության ուղղություն է, առաջացել է խոշոր գրից: Երկիրը միավորելուց հետո առաջին կայսր Ցինը (մթա. 259-210 թթ.) իր վարչապետ Լի Սիին (մթա.?-208թթ.) հրամայեց պարզեցնել գիրը, որը խիստ տարածված էր Արևմտյան Չոռու ժամանակաշրջանում: Այս պարզեցված գրելաձևը պաշտոնապես հաստատվեց՝ որպես գրի ստանդարտ ծև: Մանրագիր տեքստում օգտագործվում են գեղեցիկ ու միանման գծեր, ինչը պարզեցնում է ձեռագիրը և ընթերցումը՝ կրճատելով չինարեն տառանշանների տեսակների քանակը: Այս ոճով գրված տառանշանները նրբագեղ են, երկար ու համաշափ. վլծնահարվածը հանդարտ է սկսվում ու ավարտվում բնական, ուղղահայաց գծով: Ոլորուն գծերը տարրերվում են միմյանցից ըստ գեղագրի ցանկության՝ այդպիսով ստեղծելով բազմաթիվ պարզ, բայց նույր տարրերակներ: Բոլոր տարիքների վայելչագիրները սիրել են գրի այս տեսակը, որը վայելչագրական արվեստի յուրօրինակ ոճ է: Հան դինաստիայում այն փոխարինվեց գրասենյակային գրով:

Մեջբերումներ.

Վարչապետ Լի Սիի հետինակած «Յան Զիեն», կայսերական ծիսակառքի ղեկավար Չան Գաոյի «Յուանլին» և կայսերական աստղագետ Հու Ուձինի «Բազմակողմանի ուսում» աշխատությունները դպրոցական առաջին տարիների

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դասագրքեր են, և բոլորն էլ կրում են «Շիջոռովիանի»՝ չինարեն խոչոր գրով տառանշանների առաջին բառարանի ազդեցությունը, որն ընդգրկում էր բազմաթիվ պարզաբանումներ և ծևափոխություններ: Ահա թե ինչու ենք այն այսօր անվանում «մանր տպատառ տեքստ»: (Սու Շեն. «Չեռազրի բացալրություն և լրառանշանների մեկնաբանություն»)

Թաճ դինաստիայի Դայցուն կայսեր օրոք Լի Յանբինի հրաշալի մանր տառանշաններով ձեռագիրն էր գերիշխում աշխարհում: Սու Շենի «Չեռազրի բացատրություն և տառանշանների մեկնաբանություն» գրքի նրա տարրերակում մանրագիր ոճը հղկվել է տարրեր առումներով: Վայելագրության այս տեսակն ուսումնասիրողները հիանում էին ու հետևում դրան, և ոճը մեծ առաջընթաց ապրեց: («Սուն դինաստիայի պալմություններ»)

սիե ցի թու մառ **写气图貌**

Նկարագրի արտաքին առանձնահատկությունները՝ վեր հանելով ներքին աշխուժությունը

Եզրույթը առարկայի արտաքին առանձնահատկությունները նկարագրելու գործողությունն է՝ գրավոր ստեղծագործության մեջ դրա ներքին բնութագիրը վեր հանելու նպատակով: Այս ոչ միայն ընդգծում է տեսաձը խորքերով վերարտադրելու, այլև հոգով ընկալելու ու ըմբռնելու անհրաժեշտությունը՝ պատկերվող արտաքայի հետ հոգելոր հաղորդակցություն հաստատելու համար: Նպատակն իրերի բարնված ներգործությունն ու ոգին բացահայտելը կամ դրանց նկատմամբ խոր զգացմունքներն արտահայտելն է: Միայն այսպես կարելի է ստեղծել արվեստի գերազանց նմուշ:

Մեջքերում.

Առարկայի արտաքին առանձնահատկությունները նկարագրելիս և բարնված ներքին ոգին ըմբռնելիս ցանկալի է

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

փոխել սեփական ոճը՝ ըստ հանգամանքների. խոսքեր ու բանաստեղծական ոիբմ ընտրելիս պետք է մտքում ծանրութերն անել դրանք, հետո միայն որոշել, թե դրանցից որը լավագույնն կարձագանքի հոգու կանչին: (Լիու Սյե. «*Չ-բական միլրն ու վիշապներ քանդակելը»*)

սին ցի յու ու սին 刑期于无刑

Պատժի նպատակը պատիժը վերացնելն է

Պատիժ նշանակելու նպատակը պատիժը վերացնելն է. սա «կառավարի առաքինությամբ» կոնֆուցիական գաղափարի շարունակությունն է: Կոնֆուցիական տեսակետի համաձայն՝ ծեսերով ու երաժշտությամբ ուղեկցվող կրթությունը պետական կառավարման գլխավոր միջոցն է, իսկ պատիժները միայն օժանդակ միջոցներ են: Կառավարման նպատակն է՝ դաստիարակել մարդկանց այս երկու միջոցներով, կրթություն ապահովել և փոխել նրանց, որպեսզի որդեգրեն առաքինի վարքութարք ու առաջնորդվեն օրենքներով. այդպես կարելի է կարգուկանոն հաստատել երկնքի տակ և վերացնել պատժի անհրաժեշտությունը, այսինքն՝ վերացնել նաև պատիժը: Սա նաև իդեալական վիճակ է, որին կարելի է հասնել «առաքինությամբ կառավարելու» շրջանակներում: Սա միջոցների և նպատակների միասնության դիալեկտիկական աշխարհայցքն է:

Մեջբերում.

Կայսր Շունն ասաց. «...Հույս ունեմ՝ իմ կառավարման արդյունքում կհասնեմ իդեալական վիճակի, պատիժները կնշանակվեն դրանք վերացնելու նպատակով, և մարդիկ կկանգնեն ճիշտ ճանապարհի վրա»: (*«Պակմության զիրք»*)

սինգու 行书

Հոսող գիր

Հոսող գիրը վայելագրության ուղղություններից է, ինչպես արագագրությունը և կանոնավոր գիրը: Այս ոճում պահպանվում է շինական տառանշանի հիմնական կառուցվածքը: Հոսող գրին բնորոշ են սահուն, միմյանց հետ կապակցված վրձնահարվածները. այս ոճով գրված տառանշանները հեշտ ճանաչելի են: Ընդհանրապես մարդիկ հավատացած են, որ հոսող գիրը ստեղծել է Լիու Դեշենը Արևելյան Հան դինաստիայից, և այն մեծ տարածում է գտել Ուեյ և Չին դարշրջաններում: Այս գրելանձը սահող ամպեր և հոսող ջուր է հիշեցնում: Այս չունի որևէ կոնկրետ դասավորություն և կարող է իրագործվել գրելու համար նախատեսված ցանկացած գործիքով: Այս ոճով գրված տառանշանները տարբեր մարդկանց դեպքում տարբեր են: Ամենահանրահայտ գրուգործոցները Ուան Սիժի (303-361, կամ 307-365, 321-379թ.) «Խոլորձներով տաղավարում գրված բանաստեղծությունների ժողովածուի նախարան», Յան Չենցինի (708-784թ.) «Ելեզիա Նիս Զիմինին» և Սու Շիի «Սառը սննդի ծխակարգ» ստեղծագործություններն են: Դրանք աչքի են ընկնում որոշակի ոճով և բարձր գեղագիտական արժեքով:

Մեջբերումներ.

«Հոսող գիրը» գրելածն է, որը ստեղծել է Լիու Դեշենը Յինչուանից, Արևելյան Հան դինաստիայում: Կանոնավոր գրի տարբերակ է, հեշտ ու հարմար՝ գրելու համար: Գիրը երբեմն նմանեցնում են հոսող ջրի, ինչից էլ առաջացել է անվանումը: (Յան Հուայգուան. «Վայելագրության մեկնաբանություններ»)

Հոսող գիրը կանոնավոր գրի ավելի ազատ ու համառոտ ձև է: Հետագայում որոշ տառանշանների մասեր երբեմն միավորվում են, և գիրը դառնում էր ավելի հեշտ ու պարզ.

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ձեռագիրը նման էր սահող ամպերի և հոսող ջրի: Տառանչաների գծերի հաստությունը շարունակ փոխվում է, երբեմն հաստ է, երբեմն՝ բարակ: Սա ոչ կանոնավոր գիր է, ոչ արագագիր: Տառանչաները ոչ քառակուսի են, ոչ կլոր: Արագագրության մի տարրերակ է՝ հիմնված կանոնավոր գրի և պաշտոնական գրի վրա: (Սուն Չառ. «*Մեկնարանություններ գրի լրարրեր ոճերի վելարերյալ»)*)

սին սան փին 性三品

Մարդու էությունն ունի երեք մակարդակ

Մարդիկ դասակարգվում են՝ ըստ իրենց էության երեք մակարդակի: Սա հին չինացիների աշխարհայացքն է մարդու էության մասին: Ըստ այս տեսության՝ մարդու էության երեք մակարդակներն են՝ վերին, միջին և ստորին: Վերին մակարդակը նշանակում է, որ մարդն էությամբ բարի է: Ստորին մակարդակը նշանակում է, որ մարդը չար է: Իսկ միջին մակարդակում դժվար է տարրերակել՝ մարդու էությունը բարի է, թե չար, կամ էլ այս մարդիկ բարու և չարի համադրություն են: Ոմանք հավատացած են, որ մարդու էությունը բնածին է, հատկապես վերին և ստորին մակարդակներում, ինչպես նաև անփոփոխ է: Մյուսները կարծում են, որ կրությունը կարող է փոխել մարդուն՝ տեղափոխելով հաջորդ մակարդակ:

Մեջբերումներ.

Մենցիուսն ասում էր, որ մարդիկ իրենց էությամբ բարի են: Վստահ եմ, նա նկատի ուներ միջին մակարդակից վեր մարդկանց: Սունցին ասում էր, որ մարդիկ էությամբ չար են: Հավատացած եմ, որ նկատի ուներ միջին մակարդակից ցածր մարդկանց: Յան Սյունն ասում էր, որ մարդու էությունը բարու և չարի համադրությունն է: Կասկած չկա, որ նկատի ուներ միջին մակարդակի մարդկանց: (Ուան Չուն.

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

«Ուսուցման գարբեր դպրոցների համեմարտական ուսումնասիրություն»)

Մարդու էությունը կարելի է բաժանել երեք մակարդակի, մասնավորապես՝ բարձր, միջին և ցածր: Մարդու էությունը բարձր մակարդակում ի ծնն բարի է: Միջին մակարդակում այն կարելի է ուղղորդել դեպի բարին կամ չարը: Ստորին մակարդակում ի ծնն չար է: (Հան Յու. «Մարդու էության ուսումնասիրություններ»)

սին շան է հուն 性善恶混

Մարդու էությունը բարու և չարի միաձուլումն է

Մարդու էությունը բարու և չարի համադրություն է՝ ըստ հին չինական տեսության: Այս պնդման համաձայն՝ մարդն իր բնույթով չի կարող լինել ոչ բարի, ոչ չար, բայց թե՛ բարին, թե՛ չարը հավասարապես ապրում են նրա մեջ: Բարությունը կամ չարությունը մարդու ծննդից հետո զարգացման արդյունք է: Հետևաբար, այս տեսության համաձայն, առաքինի մարդ լինելու բանալին սովորելու ու կրթվելու է:

Մեջքերումներ.

Չի Շուն Չոնից հավատում էր, որ մարդն իր բնույթով և՝ բարի է, և՝ չար: Բարիք խրախուսելու և մշտապես խրանելու դեպքում բարությունը կավելանա: Չարիք խրախուսելու և մշտապես խրանելու դեպքում չարությունը կավելանա: (Ուան Չուն. «Կրրության գարբեր դպրոցների համեմարտական ուսումնասիրություն»)

Մարդու էությունը բարու և չարի համադրությունն է: Նա, ով լավ որակներն է զարգացնում, կդառնա լավ մարդ: Նա, ով չար որակներ է զարգացնում, կդառնա չարազործ: (Յան Սյուն. «Օրինակելի սասացվածքներ»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

սին ու շան ու է 性无善无恶

Մարդն իր բնույթով ոչ բարի է, ոչ չար

Մարդու էությունը ոչ մի կապ չունի բարիքի կամ չարիքի հետ. այս տեսակետին հարում էին իին չինացիները: Փիլիսոփա Գաոցին այս տեսության կողմնակիցներից էր: Այսուեղ մարդու էություն կամ մարդկային բնույթ ասելով նկատի ունենք մարդ արարածի բնածին հատկանիշները: Հստ Գաոցին՝ մարդու ներքին ցանկությունները, որոնք ուղղված են արտաքին աշխարհին, արտացոլվում են բացառապես ֆիզիկական կարիքների մեջ, ինչպիսիք են, օրինակ, սնվելու կամ սեռական կարիքները: Այս բնագրները կապ չունեն էրիկայի հետ, ոչ բարի են, ոչ չար: Մարդու բարությունը կամ չարությունը նրա ծննդից ի վեր զարգացման և հասարակական ազդեցության արդյունք են: Մարդիկ, որոնք ենթարկվում են դրական ներգործության, հակված են բարի գործեր անել: Անբարենպաստ միջավայրում ապրող մարդիկ հակված են վատ գործեր անել:

Մեջքերում.

Գաոցին ասում էր. «Մարդու էությունը նման է արագ հոսող գետի: Եթի արևելյան ափին ճեղք է բացվում, ջուրը հոսում է արևելք: Եթի ճեղքը բացվում է արևմտյան ափին, ջուրը հոսում է արևմտյաք: Ինչպես հոսող ջուրը չի կարող որոշել, թե որը է գնում, այնպես էլ մարդու էությունը չի կարելի որակել բարի կամ չար»: («Մելիցիուս»)

սյունդի սի յու ցիան, ուայ յու ցի ու 兄弟阋于墙，外御其侮

Եղբայրները վիճում են տան պատերից ներս. դրսում դիմադրում են արտաքին ճնշմանը

Եղբայրները կարող են վիճել տանը, բայց դրսում կանգնում են միմյանց թիկունքի՝ պաշտպանվելով օտարների ճն-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

շումից: Եզրույթը վերաբերում է մարդկանց, որոնք ունեն ներքին հակասություններ ու տարածայնություններ, բայց մի կողմ են դնում դրանք և համատեղ ուժերով դիմադրում ագրեսիային: Արտահայտությունը լիարժեք արտահայտում է չինացի ժողովրդի՝ ճգնաժամի պահին միմյանց աջակցելու մղումը: Արդի ժամանակներում եզրույթն օգտագործվում է՝ որպես չինացիների ազգային միասնության խորհրդանշ, երբ նրանք արտաքին ազրեսիայով պայմանավորված գոյատևման ճգնաժամի առաջ են:

Մեջբերում.

Ֆու Չենն առարկեց. «Սա անբույլատրելի է: Հները մի ասացվածք ունեին. «Եղբայրները կարող են վիճել միմյանց հետ, բայց միևնույն է, հարյուր լի հեռավորությունից մոտ չեն քողնի իրենց ճնշողներին»: Զոուի դուքսը բանաստեղծության մեջ գրում է. «Եղբայրները վիճում են տաճ պատերից ներս. դրսում երանք դիմադրում են արտաքին ճնշմանը»: Այսպիսով, եղբայրների միջև վեճը ներքին տարածայնություն է և չի կարող սասանել ընտանիքի ամրությունը»: («Դիսկուրսներ պետության կառավարման շուրջ»)

սիուձի-անրեն 修己安人

Զարգացրու քեզ, բարիք քեր ուրիշներին

«Սեփական անձը զարգացնել» նշանակում է զանք ու եռանդ չխնայել՝ մշտապես սեփական տաղանդն ու առաքինությունն ավելացնելու, կատարելության հասնելու և ներքուստ իմաստուն դառնալու համար: «Բարիք քեր ուրիշներին» նշանակում է ցուցաբերել սեփական տաղանդն ու առաքինությունը, ներդրում անել հասարակության մեջ ու բարիք քերել ուրիշներ: Սա հենց այն է, ինչ Կոնֆուցիոսը նկատի ուներ «առաքինի մարդ» ասելով. սա նաև կոնֆուցիական դպրոցի առաքինությամբ կառավարման գաղափարի դրսևումն է:

Մեջբերում.

Յիլուն հարցրեց, թե ինչպիսին է առաքինի մարդը: Եվ Կոնֆուցիոսն ասաց. «Նա զարգացնում է ինքն իրեն, որ հարգանքի արժանի լինի»: Յիլուն հարցրեց. «Սիայն այդքա՞նը»: Կոնֆուցիոսն ասաց. «Նա զարգացնում է ինքն իրեն՝ բարիք բերելով ուրիշներին»: Յիլուն հարցրեց. «Եվ վե՞րջ»: Կոնֆուցիոսն ասաց. «Նա զարգացնում է ինքն իրեն՝ բարիք բերելով բոլորին: Բոլորին հարմարավետություն պարզեւելը նույնիսկ Յառյի և Շունի համար բարդ կիներ»: («Անապեկըներ»)

Забытые гастрономические традиции

Յանդուի ութ մոզական նկարիչներ

Նրանք Ցինի Յանցոու տարածաշրջանի ութ ականավոր գործող նկարիչներն էին Ցինի Քանսի (1662-1722թթ.) և Ցին անլուն (1736-1795թթ.) կայսրերի օրոք: Աչքի էին ընկնում վառ անհատականությամբ և նկարչության նորական ոճով: Նրանք են՝ Ուան Շիշեն(1686-1762թթ.), Լի Չան(1686-1762թթ.), Զին Նուն(1687-1763թթ.), Հուան Շեն(1687-1768թթ.), Գան Սիան(1688-1753թթ.), Զեն Սիե(1693-1765թթ.), Լի Ֆանյին (1695-1754թթ.) և Լուո Փին (1733-1799թթ.) (գոյություն ունի նաև մեկ այլ ցուցակ): Հիմնականում պաշտոնյաներ էին, որոնք զրկվել էին աջակցությունից, կամ գիտնականներ, որոնց չեր հաջողվել իրականություն դարձնել ձգտումները, հետևարար բորբակում էին իրենց բարկությունը նկարչության ու վայելչագրության միջոցով: Արհամարիելով նկարչության ավանդական ձևերը՝ նրանք ստեղծում էին իրենց նոր ոճ՝ նորամուծություններ անելով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վայելչագրությունը նկարչության մեջ, զուտ վայելչագրություն և տառանշանների փորագրում: Յուրօրինակ ձեռքբերումների շնորհիկ ժամանակակիցները նրանց անվանում էին «քմահաճ հանճար»:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ներ» և «տարօրինակներ»: Կրում էին նաև հարգարժան տիտղոս՝ «Յանչոռով ուր մոգական նկարիչները»: Նրանք խոր ազդեցություն բողեցին արդի շրջանի նկարիչների, օրինակ՝ Յի Բայչի (1864-1957թթ.) և Չեն Շիցենի (1876-1923թթ.) վրա:

Մեջքերումներ.

Առարկաներ, որ բացատրում են երկնքի ու երկրի առեղծվածները, ստեղծագործություն, որից ամպրոպ ու անձրև է սկսվում, լուսանքներ, որ բափկում են չար հոգիների վրա, և նկարներ, որ արհամարհում են բոլոր սահմանված օրենքները. սովորական մարդիկ հազիվ թե նկատեն այս ամենը: («Չին Բանցիանյի երկերի ժողովածու»)

Ափսոս, որ ուր մարդիկ, որոնք հայտնվեցին նույն ժամանակաշրջանում և աչքի ընկան նկարչության ուրույն ոճով, որ տարբերվում էր հիմնական նկարչական հոսանքից, չունեին միասնական արտահայտչամիջոցներ, թեև հայտնի էին «Սնգական ութնյակ» անունով: (Ուան Չուն. «Յանչոռով նկարիչների կենակը գրությունները»)

յեռյիսիան

野无遗贤

Անհեռատես մարդիկ անտեսվում են

Անհեռատես մարդիկ անտեսվում էին, իսկ արժանիքներով և տաղանդով օժտվածներն աշխատանքի էին անցնում կառավարությունում: Սա «հեռատես մարդն արժանի է պատկառանքի» հետագույն հասկացության դրսնորումն էր: Հին ժամանակներից ի վեր Չինաստանում ընդգծվել է, որ մարդիկ պետք է պաշտոնական դիրքի նշանակվեն ըստ արժանիքների, և յուրաքանչյուր մարդ պետք է լիարժեք կատարի իր դերը: Ընդունված կարծիք է, որ սա պետության կայուն կառավարման երաշխիքն է: Հին Չինաստանում հենց այս գաղափարի վրա էին հիմնված բոլոր համակարգերը (այդ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թվում և խորհրդատվությունը կամ կայսերական քննոթյունները), որոնք անհրաժեշտ էին պաշտոնի համար մարդկանց ընտրելիս: «Անհեռատես մարդիկ անտեսվում են» սկզբունքը երկրի միջտ կառավարման խորհրդանիշերից էր:

Մեջբերում.

Կառավարությունն անտեսում է անհեռատես մարդկանց: Այդպես է ապահովում բոլոր պետությունների խաղաղությունը: («Պալումուրյան զիրքը»)

յելուտ-գույգեն

叶落归根

Տերեւները թափվում են՝ վերադառնալով արմատներին

Տերեւները թառամում ու թափվում են գետնին՝ ծառարմատի մոտ: Այս փոխարերությունը ենթադրում է, որ բոլոր արարածներն ունեն հին տուն, որ վերադառնում են նույնիսկ հեռավոր վայրերում անցկացրած երկարատև կյանքից հետո: Այն արտահայտում է կարոտը ծննդավայրի հանդեպ, ինչը տարածված գաղափար էր հին չինացիների շրջանում: Գուցե այս գաղափարը պահպանողական է, բայց, այնուամենայնիվ, մարմնավորում է մարդկանց բարի ու ազնիվ սերը ծննդավայրի ու հարազատների, ջերմ զգացմունքները՝ ազգի ներկայացուցիչների հանդեպ: Սա մշակույթը սեփական անձի հետ նույնացնելու գլխավոր շարժառիթն է:

Մեջբերում.

Ամպերը հանդարտ սահում են սարերի գագաթների վրայով, տերեւները երջանիկ թափվում են՝ ձգտելով արմատներին: (Լու Յոու. «Հողոց՝ լուսնը»)

յիհուա — ■

Նկարչության բոլոր ձևերը՝ բազմապատկված մեկ վրձնահարվածից /

Միասնությունը նկարչության մեջ

Թեև եզրույթը բառացի նշանակում է «նկարչության մեջ կիրառվող գծեր», հիմնականում հղում է հիմնարար օրենքներին, որոնք ուղղորդում են նկարչական արվեստը, ապա՝ տիեզերքում ամեն ինչի ձևավորման և զարգացման համընդհանուր օրենքներին: Գաղափարն առաջադրել է Յին դինաստիայի նկարիչ Շի Թաոն (1641-1718?թթ.), չնայած նրա գաղափարները հակասական արձագանք գտան ժամանակակից գիտնականների և նկարիչների շրջանում: Շին, որի ներշնչանքի արյուրը դառսական փիլիսոփայությունն ու Չան (Չեն) տեսությունն եր, ինչպես նաև Ֆու Սիի՝ ինը և յանը խորհրդանշող մեկ գիծը (Երեք ամբողջ կամ հատված գծի ուր համարդություն, որոնք նախկինում օգտագործվում էին գուշակության մեջ), պնդում եր, որ տիեզերքում ամեն ինչ առաջանում է մեկ ամբողջությունից: Նկարչի վրձնի տակ շոշափելի երևույթները Երեք չեն կորցնում այդ առանցքային միասնությունը: Նրա համար միասնությունը զրո է, ոչինչ: Այսպիսով՝ նկարչությունը ոչնչից շոշափելի առարկաներ ստեղծելու գործընթաց է: Սա նաև Դառն է՝ նկարչական ոճի և տիեզերքում ամեն ինչի համարդությունը: Բացի այդ, միասնությունը ենթադրում է լայնորեն կիրառելի կանոնների շարք, որն առկա է ողջ նկարչական գործընթացում: Յուրաքանչյուր վրձնահարված կամ գիծ այս կանոնների արտացոլումն է: Միասնությունը նկարչական տեսության մեջ ընդգրկում է բազմաթիվ հարաբերություններ՝ մի կողմից միասնության, մյուս կողմից՝ Դառնի, ոչնչի, շոշափելիության ու բազմազանության միջև: Այն հարուստ է փիլիսոփայական առնչություններով և գեղարվեստական նշանակությամբ: Հետագայում եզրույթը դարձավ ավանդական չինական գեղագիտական մտածողության և նկարչական տեսության կարևոր մաս:

Մեջբերումներ.

«Նկարչության մեջ միասնությունը բոլոր իրերի ու երևոյթների ձևավորման և զարգացման հիմքն է: Սենք կը նդունենք դա, եթե պատրաստ լինենք հոգով զգալ այդ փորձառությունը: Այն ներհատուկ է մեր հոգուն, թեև լիովին չենք հասկանում դա: (Ծի Թառ. «Նկարչության սկզբունքի և դեխնիկական միջոցների մասին»)

Զգա նկարչության բուն էության համընդիանուր օրենքները, որոնք ընկած են նկարչական տեխնիկայի ընկալման հիմքում: Ընթացիկ կյանքի և տիեզերքի էությունը: Սա նկարչության և վայելչագրության գլխավոր հմտությունն է, որի անրիվ-անհամար տարրերակները լավագույնս ներկայացնում են վրձնի և բանաքի կատարման վարպետությունը: (Ծի Թառ. «Նկարչության սկզբունքի և դեխնիկական միջոցների մասին»)

**յի գուռ ուեյ գուռ, յի թիանսիա
ուեյ թիանսիա**

以国为国，以天下为天下

Նահանգն ու երկիրը կառավարիր տարբեր մեթոդներով

Նահանգ դեկավարելիս օգտվիր նահանգի համար նախատեսված մեթոդներից: Երկիր դեկավարելիս օգտվիր երկրի հանար նախատեսված մեթոդներից: Գուանցին պնդում էր, որ կառավարիչը քաղաք դեկավարելիս չպետք է օգտվի կլանային մեթոդներից, այտուրյուն դեկավարելիս չպետք է դիմի քաղաքի կառավարման մեթոդներին, իսկ երկիր դեկավարելիս չպետք է նախապատվություն տա պետություն կառավարելու մեթոդներին: Անհրաժեշտ է փոխել կառավարման ոճը՝ ըստ տարածքային տարբերությունների: Պետք է լայնացնել աշխարհայացքն ու միտքը կառավարվող տարածքի ընդլայնմանը զուգահեռ: Ժամանակակից լեզվով «նահանգը» կարելի է մեկնարանել՝ որպես երկիր, իսկ «երկիրը»՝ որպես աշխարհ:

Մեջբերում.

Եթե քաղաքը կառավարես կլանը դեկավարելու մեթոդներով, հաջողության չես հասնի: Եթե նահանգը կառավարես քաղաքը դեկավարելու մեթոդներով, հաջողության չես հասնի: Եթե նահանգը կառավարես երկրի դեկավարելու մեթոդներով, հաջողության չես հասնի: Կլան դեկավարելիս պետք է քավարարել կլանի պահանջները, քաղաք դեկավարելիս՝ հաշվի առնել քաղաքի պահանջները, նահանգ դեկավարելիս՝ նկատի ունենալ նահանգի պահանջները: Երկիր կառավարելիս պետք է կատարել երկրի առաջադրած պահանջները: Պետք չէ մերժել ուրիշների խորհուրդները, միայն՝ որովհետև նրանք կլանի անդամ չեն: Պետք չէ հրաժարվել այլ քաղաքի մարդկանց խորհուրդներից, միայն՝ որովհետև նրանք չեն ապրում քո քաղաքում: Պետք չէ հրաժարվել այլ նահանգի ժողովրդի խորհուրդներից, միայն՝ որովհետև նրանք քո նահանգից չեն: Պետք չէ հրաժարվել այլ ժողովուրդների խորհուրդներից, միայն՝ որովհետև նրանք օստարելուացիներ են: Սի՞թե քննությունն անկողմնակալ է երկնքի ու երկրի միջև ամեն ինչի նկատմամբ: Արևն ու լուսինը լույս են սփռում ամեն ինչի վրա: Կառավարիչը պետք է նույն կերպ վարվի: («Գուանցի»)

յի սին մեյ դառ 以形媚道

Դառյին հարմարվող բնական ձևեր

Սարերն ու գետերը ձևով հարմարվում են Դառյին: Հարավային դինաստիաներից Սուն դինաստիայի նկարիչ Ցուն Քինը (375-443թթ.) իր «Բնանկարների ստեղծման մասին» գրքում զարգացնում է Կոնֆուցիոսի այն խոսքը, որ «Առարինի մարդը սիրում է սարերը, ինաստուն մարդը՝ ջրերը»: Ցունը պնդում է, որ սարերն ու գետերը ոչ միայն մարդկությանը ցույց են տալիս իրենց բնական գեղեցկությունները, այլև արտացոլում փոփոխությունների բնական օրենքը: Հետևա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

բար, սիրված են առաքինի մարդկանց կողմից: Այս եզրույթն արտացոլում է մարդկանց գեղագիտական աշխարհայացքը Վեց դինաստիաների ժամանակահատվածում:

Մեջբերումներ.

Կոնֆուցիոն ասում էր. «Իմաստուն մարդը սիրում է ջրեր, առաքինի մարդը՝ սարեր: Իմաստուն մարդն ակտիվ է, առաքինի մարդը պահպանում է մտքի խաղաղությունը: Իմաստուն մարդը երջանիկ է, առաքինի մարդը վայելում է երկարակեցությունը»: («Անակեկրներ»)

Իմաստունները հոգով հետևում են Դառյին: Առաքինի ու տաղանդավոր մարդիկ կարող են ըմբռնել ու գործնականում կիրառել Դառն: Սարերն ու գետերն իրենց բնական ծևով հարմարվում են Դառյին: Դա է պատճառը, որ սիրված են բարեգործ մարդկանց կողմից: Մի՞թե սա նույր ու խոր գաղափար չէ: (Յուն Բին. «Բնակարչության արեղծման մասին»)

յի սին ցու սին 以刑去刑

Պատիժը պատժով վերացնելը

Պատիժը պատժով վերացնելը «օրենքով կառավարելու» լեզվահստական ոպրոցի կոնկրետ դրսւորում է: Թվում է, թե այն շատ մոտ է կոնֆուցիական այն գաղափարին, որ պատիժն արձակվում է պատիժը վերացնելու նպատակով, սակայն իրականում միանգամայն այլ իմաստ ունի: Կոնֆուցիականները կարևորում են ծեսերը, ցանկանում են դրանց միջոցով ազատվել պատիժներից, իսկ լեզվահստական կարևորում են պատիժները. նրանք բարձր տուգանքը համարում են հասարակ մարդկանց պրտերում վախ արթնացնելու միջոց, որպեսզի վերջիններս չհամարձակվեն հանցանք գործել: Ըստ այս տեսության՝ որոշ ժամանակ անց պատժի կարիք այլևս չէր լինի: Եթե դիտարկենք «Երկնքի

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տակ՝ մեծ կարգուկանոն» հաստատելու իդեալական վիճակի տեսանկյունից «պատժի վերացում» լեզավիշտական գաղափարը շատ մոտ է կոնֆուցիական «պատժի վերացմանը», բայց զորք է մարդու հանդեպ մտահոգ վերաբերմունքից, որը հատուկ է կոնֆուցիականությանը:

Մեջբերում.

Եթե մանր հանցանքների համար կիրառվի դաժան պատիժ, մարդիկ այլևս մանր հանցանք չեն գործի, իսկ լուրջ հանցազրությունները կնվազեն: Սա պատժի վերացում է պատժի միջոցով: Եթր պատիշները վերացվեն, պետական կառավարումը հաջողության կիանան: («Ծանօթ ասրծո գիրքը»)

յիսուսին ավել շեն

Գտիր ողին, որ ձևից անդին է

Նկարիչները պատկերում են արտաքին տեսքը, որպեսզի բացահայտեն ներքին էությունը: Արևելյան Զին դիմատիա- յի նկարիչ Գու Քայջին (345?-409թթ.) կարևորում է էության և ֆիզիկական ծնի համապատասխանությունը: Նա ամենայն մանրանանությամբ նկարագրում է առարկաների արտա- քինը, որը նրանց հոգևոր աշխարհի արտացոլանքն է: Նրա կարծիքով՝ սա նկարչության բարձրագույն պահանջն է: Քայջին նկարիչներին կոչ է անում թնդգել արտաքին հատ- կանիշները, որոնք լավագույնն բացահայտում են նկարագր- ված առարկաների հոգևոր էությունը: Այս տեսակետը մեծ ազդեցություն է բռնել հետագա շրջանի ստեղծագործական նախաձեռնությունների վրա:

Մեղքերում.

Մարդն առանց պատճառի առաջ չի նայի ու նետը չի վերցնի, եթե նրա դիմաց ոչ ոք չիննի: Նկարչությունը, պատկերելով ֆիզիկական ձևն ու առանձնահատկությունները,

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

վեր է հանում բուն էությունը: Կոմկրետ առարկաների բացակայությունը հաճախ ստիպում է, որ նկարը շեղվի պատկերելու իր գործառույթից ու կորցնի առարկայի ներքին էությունը վերհանելու նպատակը: (Գու Ջայջի. «Ուեյ և Զին դիմասրիաների ականավոր նկարների զոլը»)

